# ՀԱՄԱՊԱՐՓԱԿ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

## 2018-2020 ԹԹ. ՀՀ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՈՐԱԿԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ԻՆՍՏԻՏՈՒՑԻՈՆԱԼ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՆԵՐԻ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՈՒՄ

ԵՐԵՎԱՆ 2021

# ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ ..... 3

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿԸ ..... 3

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ ..... 4

ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ ..... 4

ՄԱՍ 1. ԴԻՄՈՒՄ-ՀԱՅՏ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ՀԱՄԱՐ ..... 6

ՄԱՍ 2. ԻՆՔՆԱՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ ..... 7

ՄԱՍ 3. ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԽՄԲԻ ՁԵՎԱՎՈՐՈՒՄ ԵՎ ԿԱԶՄ ..... 13

3.1 ՓՈՐՁԱԳԵՏՆԵՐԻ ՀԱՎԱՔԱԳՐՈՒՄ, ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՈՒՄ ԵՎ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲԱՇԽՈՒՄ ..... 13

3.2 ՀԱՄԱԿԱՐԳՈՂԻ ԴԵՐԸ ԵՎ ԱՆՀՐԱԺԵՇՏ ՀՄՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՌԿԱՅՈՒԹՅՈՒՆԸ ..... 20

ՄԱՍ 4. ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅՈՒՆ (ԱՐՏԱՔԻՆ ԳՆԱՀԱՏՈՒՄ) ..... 23

4.1. ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՆԱԽՆԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ (ՆԱԽՆԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՈՒՄ) ..... 23

4.2. ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԱՅՑ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆ ..... 24

4.3. ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԶԵԿՈՒՅՑԻ ՊԱՏՐԱՍՏՈՒՄ ..... 31

ՄԱՍ 5. ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ՅՈՒՐԱՔԱՆՉՅՈՒՐ ԳՈՐԾԸՆԹԱՑԻՆ ՀԱՏԿԱՑՎԱԾ ԺԱՄԿԵՏՆԵՐԻ ԻՐԱՏԵՍԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ..... 37

ԱՄՓՈՓՈՒՄ ..... 39

# ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Սույն զեկույցը ներկայացնում է հավատարմագրման գործընթացի համապարփակ վերլուծության արդյունքները: Հետազոտությունն իրականացվել է Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կոնտրոն, հիմնադրամի (այսուհետ՝ ՈԱԱԿ) կողմից: ՈԱԱԿ-ը 3 տարի պարբերականությամբ ձեռնամուխ է լինում կատարել կարիքների համապարփակ վերլուծություն՝ ուսումնասիրելով մասնագիտական ուսումնական հաստատությունների (ՄՈՒՀ-եր) ինստիտուցիոնալ կառավարման և մասնագիտության կրթական ծրագրերի (ՄԿԾ) կառավարման ներկա իրավիճակը, և փորձել վերհանել այն գործոնները, որոնք խթանում են կամ խոչընդոտում են ՄՈՒՀ-երի զարգացումը:

ՈԱԱԿ-ն առաջնային կարևորություն է տալիս հավատարմագրման գործընթացի շարունակական բարելավմանը, իսկ իր կողմից իրականացված հավատարմագրման գործընթացի արդյունավետության ուսումնասիրությունը հնարավորություն է տալիս վերհանել լավագույն փորձը, բացահայտել գործընթացի փաստացի վիճակը, խնդիրներն ու բացթողումները, վերանայել ու կատարելագործել (ըստ նպատակների ու խնդիրների) փաստաթղթային հենքն ու գործընթացն ինքնին:

Այսպիսով, իրականացված հետազոտության անհրաժեշտությունն արտահայտվում է երկու հանգամանքով՝

- հավատարմագրման գործընթացը ենթարկվում է համակողմանի
- ուսումնասիրության, հնարավորություն է ստեղծվում, հիմնվելով էմպիրիկ տվյալների վրա, կատարելագործելգործընթացը և վերանայել ոլորտը կարգավորող փաստաթղթային հենքը:

# ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿԸ

ՈԱԱԿ-ի կողմից իրականացված հետազոտության նպատակն է ուսումնասիրել՝

- որքանով է ՄՈՒՀ-երի հավատարմագրումն իրականացվել հիմնավորված, անկախ և անկողմնակալ
  - փորձագիտական զեկույցներն ըստ շահակիցների հուսալի են և հիմնավորված
  - հավատարմագրման գործընթացները եղել են թափանցիկ և հստակ
  - փորձագետները եղել են անկախ գնահատման, որոշման կայացման գործընթացներում և առհասարակ գործելառճում
- որքանով են հավատարմագրման արդյունքներն ընդունելի ՀՀ մասնագիտական կրթական համակարգի և միջազգային փորձագետների կողմից
- որքանով են կանոնակարգերում, ՈԱԱԿ ընթացակարգերում և ձևաչափերում կատարված փոփոխությունները փոխկապակցված և հաշվի առնում գործընթացի ընթացքում առաջացող խնդիրներն և խոչընդոտները
- որքանով է գործընթացն իրականանում Հավատարմագրման կարգի և սահմանված ժամանակացույցներին համապատասխան
  - շահակիցները բավարարված են աշխատանքային ծանրաբեռնվածությունից և ՈԱԱԿ ձևաչափերից:

Ուսումնասիրությունը ենթադրել է՝

- հավատարմագրման գործընթացի լավագույն փորձի վերհանում, բացթողումների,թերությունների բացահայտում և համակողմանի վերլուծություն,
- հավատարմագրման գործընթացի արդյունավետության
- գնահատում,փաստաթղթային հենքի վերանայում:

## ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ

- նկարագրել հավատարմագրման գործընթացի առկա
- վիճակը,ստանալ տեղեկություններ՝
  - փորձագիտական վերապատրաստումների,
  - ՈԱԱԿ-ի կողմից տրամադրվող տեղեկատվության և փաստաթղթերի փաթեթի,
  - դիմում-հայտի ընդունման,
  - ՈԱԱԿ-ի էլեկտրոնային հարցաշարի,
  - փորձագիտական խմբի կազմի,
  - ինքնավերլուծության իրականացման, զեկույցի ընդունման,
  - նախնական գնահատման,
  - փորձագիտական այցի,
  - փորձագիտական զեկույցի,
  - թերությունների վերացման ՄՈՒՀ-ի ծրագրի,
  - փորձագետի անկախության,
  - փորձագետ-համակարգող փոխհարաբերությունների,
  - համակարգողի մասնագիտական հմտությունների,
  - միջազգային փորձագետի հետ համագործակցության,
  - աշխատանքային միջավայրի,
  - հավատարմագրման գործընթացի ժամկետների իրատեսականության,
  - տրամադրված խորհրդատվության վերաբերյալ:
- հիմնվելով ստացված քանակական և որակական տվյալների վրա՝ նկարագրել հավատարմագրման գործընթացը, ըստ այդմ՝ քննարկել գործընթացին առնչվող մարտահրավերները, զարգացման միտումները և հեռանկարները:

## ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Հետազոտության իրականացման համար կիրառվել է հետազոտության քանակական և որակական մեթոդներ:

Հետազոտությունը միտված է եղել՝

- քանակական տվյալներով նկարագրել հավատարմագրման գործընթացիկառուցվածքային տարրերը,
- որակական տվյալներով բացատրել առկա խոչընդոտները և դրանց բարելավմանհնարավոր ուղիները:

Հետազոտության նկարագրական և քանակական կողմն ապահովելու համար նպատակահարմար է եղել անանուն օնլայն հարցաթերթիկային հարցման մեթոդի կիրառումը (հավատարմագրման գործընթաց անցած ՄՈՒՀ-եր (բուհեր, միջին մասնագիտական ուսումնական հաստատություններ(ՄՄՈՒՀ)), տեղական և միջազգային փորձագետներ, համակարգողներ, ՈԱԱԿ հավատարմագրման հանձնաժողով), որը հնարավորություն է տվել հարցման մասնակիցներին անկեղծորեն արտահայտել իրենց կարծիքը, և բարձրացրել է ստացված տեղեկատվության հուսալիությունը: Հավատարմագրման գործընթացի արդյունավետության գնահատման հարցաթերթը մշակվել է ՈԱԱԿ-ի աշխատակազմի կողմից և համապատասխանաբար փորձարկվել ու կիրառվել 2012-2017թթ. իրականացված հավատարմագրումների ժամանակ: Վերլուծությունների արդյունքում, ինչպես նաև վերջին շրջանի մարտահրավերներով

պայմանավորված հարցաթերթը լրամշակվել է:

Հետազոտության իրականացման ժամանակահատվածը ներառում է 2018-2020թթ.: Հետազոտությանը մասնակցել են հավատարմագրման գործընթացներում ներգրավված 56 տեղացի փորձագետներ, 13 միջազգային փորձագետներ, հավատարմագրման գործընթաց անցած 9 բուհերի ներկայացուցիչներ, հավատարմագրում անցած ՄՄՈՒՀ-ների 17 ներկայացուցիչներ, 17 հավատարմագրման գործընթացների համակարգողներ և հավատարմագրման հանձնաժողովի անդամներ[1]:

Հետազոտության շրջանակներում որակական տեղեկատվության հավաքագրման համար կիրառվել է ֆոկուս խմբերի մեթոդը (Համավարակային պայմաններում իրականացվել է օնլայն տարբերակով), որը հավատարմագրման գործընթացի շուրջ մանրամասն տեղեկատվություն ստանալու հնարավորություն է տվել՝ ապահովելով հավատարմագրման գործընթացում ներգրավված հիմնական խմբերի (փորձագետներ, ՄՈՒՀ-երում ինքնավերլուծություն իրականացրած անձինք և որակի ապահովման պատասխանատուներ, համակարգողներ և հավատարմագրման հանձնաժողովի անդամներ) խորքային ներգրավվածությունը հետազոտությանը: Այս մեթոդի կիրառման միջոցով հատուկ անդրադարձ է կատարվել առաջին մեթոդի՝ օնլայն անկետային հարցման միջոցով ստացված տվյալների պարզաբանմանը և ուսումնասիրությանը:

Հետազոտության վերը ներկայացված երկու մեթոդների ընտրությունը հանդիսացել է գործընթացի համակողմանի վերլուծության նախապայման: Բոլոր նշված խմբերի կողմից տրամադրված տեղեկատվությունն ընդհանրացվել է վերլուծության շրջանակներում և ներկայացվում է ստորև:

[1] Տե՛ս հավելված 1. Հետազոտության մասնակիցների նկարագիրն ու ընտրանքը

# ՄԱՍ 1. ԴԻՄՈՒՄ-ՀԱՅՏ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ՀԱՄԱՐ

Որակի ապահովման համակարգի գործառնության փաստացի նպատակը ՄՈՒՀ-երի կրթական գործընթացների և/կամ կրթական արդյունքների շարունակական կատարելագործումն է, որը միտված է ՄՈՒՀ-ի կարիքների շարունակական բավարարմանը: Սա, ըստ էության, վերաբերում է ՄՈՒՀ-ի որակի ապահովման համակարգի գործունեության կառավարմանը և հավատարմագրման գործընթացի կազմակերպմանը:

Քանի որ, հավատարմագրման գործընթացը սկսվում է բուհի կողմից դիմում հայտի ներկայացմամբ, հետազոտության շրջանակում ևս սկսվել է դիմում հայտի կառուցվածքի և բովանդակության դիտարկմամբ: Ուսումնասիրվել են դիմում հայտը լրացնելիս առաջացած խոչընդոտները, և պարզվել, թե բարելավման միտումով ինչ փոփոխությունների անհրաժեշտություն կա:

| Դիմում-հայտի (պահանջվող փաստաթղթերի) կառուցվածք և բովանդակություն<br>Ի՞նչ խոչընդոտների հանդիպեցիք դիմում-հայտը լրացնելիս:<br>Ի՞նչը կփոխեիք: | Պատասխանների հաճախականությունը |
|---|---|
| Խոչընդոտներ չեն եղել | 100 |
| Ընդամենը | **100%** |

Հարցվածների բացարձակ մեծամասնության պնդմամբ դիմում-հայտը լրացնելիս խոչընդների չի հանդիպել և առանձնապես փոփոխությունների անհրաժեշտություն չի տեսնում: Թե՛ բուհերի, թե՛ ՄՄՈՒՀ-ների ներկայացուցիչները համարում են, որ ձևաչափը պարզ է: Տեսակետը հաստատվեց նաև ֆոկուս խմբային քննարկման ժամանակ: Ավելին, նշվեց, որ շատ արդյունավետ և գնահատելի է ՈԱԱԿ աշխատակազմի մշտական պատրաստակամ արձագանքը՝ յուրաքանչյուր հարցի շուրջ խորհրդատվություն իրականացնելիս:

| ՈԱԱԿ-ի էլեկտրոնային հարցաշար<br>Ի՞նչ խոչընդոտների հանդիպեցիք հարցաշարի լրացման ընթացքում:<br>Ի՞նչը կփոխեիք: | Պատասխանների հաճախականությունը |
|---|---|
| Խոչընդոտներ չեն եղել | 44.4% |
| Ներկայացվող փաստաթղթերի ծավալը մեծ էր | 55.6% |
| Ընդամենը | **100%** |

Հիմնվելով հետազոտության արդյունքների վրա՝ պետք է նշել, որ ՈԱԱԿ-ի էլեկտրոնային հարցաշարը լրացնելիս բուհերի ներկայացուցիչների հանդիպած խնդիրները հիմնականում եղել են ներկայացվող փաստաթղթերի ծավալը, որը երբեմն հանգեցնում էր տեխնիկական խնդիրների, և ժամանակահատվածի կարճ լինելը: Դիտարկումները վերաբերում են նաև էլեկտրոնային հարցաշարում և այլ փաստաթղթերում ներկայացված տեղեկատվության կրկնությանը, որը որոշ դեպքերում դժվարացնում է ՄՈՒՀ-ի աշխատանքը: Ի տարբերություն բուհերի, ՄՄՈՒՀ-ների ներկայացուցիչները նշում են, որ խնդիրները հիմնականում եղել են տեխնիկական բնույթի, որոնք արագ շտկվել են: Միևնույն ժամանակ գրեթե բոլոր մասնակիցների կողմից բարձ է գնահատվել ՈԱԱԿ անձնակազմի պատրաստակամությունն ու անկեղծ հոգածությունը խնդիրներն արագ վերացնելու և աջակցելու: Մինչդեռ ձևաչափի բովանդակային փոփոխության անհրաժեշտություն չեն տեսնում: Տեսակետը հաստատվել է նաև ֆոկուս խմբային քննարկման ժամանակ:

# ՄԱՍ 2. ԻՆՔՆԱՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

ՄՈՒՀ-ի կողմից իրականացվող ինքնավերլուծության գործընթացի արդյունավետ իրականացմանը նպաստելու համար ՈԱԱԿ-ը մշակել է մի շարք ուղենիշեր, այդ թվում՝ ինստիտուցիոնալ և ծրագրային ինքնավերլուծության ձևաչափեր, որոնք Հավատարմագրման գործող կարգի բաղկացուցիչ մասն են կազմում: Վերոնշյալ ձևաչափերի արդյունավետությունը, կիրառելիությունը գնահատելու նպատակով փորձ է արվել պարզել շահակիցների բավարարվածությունը ձևաչափից, ինչպես նաև ինչպիսի խոչընդոտների են հանդիպել կառուցվածքային և բովանդակային առումով: Ընդհանրացնելով հետազոտությունների արդյունքները՝ կարելի է ասել, որ հիմնական խոչընդոտները կապված են տերմինների մեկնաբանման հետ, ինչպես նաև տարբեր ուսումնական հաստատությունների առանձնահատկությունները շեշտադրելու հետ:

| Ինստիտուցիոնալ կարողությունների ինքնավերլուծության ձևաչափի կառուցվածք<br>Ի՞նչպիսի խոչընդոտների հանդիպեցիք: | Պատասխանների հաճախականությունը |
|---|---|
| Չափանիշներում առկա ենթակետերը (չափորոշիչները) շատ են | 3 |
| Առկա են ոչ հստակ/ պարզաբանման անհրաժեշտություն ունեցող ձևակերպումներ | 6 |
| Ձևաչափն ընդհանրական է և հաշվի չի առնում տարբեր ուսումնական հաստատությունների առանձնահատկությունները | 2 |
| Ձևաչափը կիրառելի է, և խոչընդոտներ չեն եղել | 7 |
| Ձևաչափն ամբողջովին փոփոխության կարիք ունի | 1 |
| Ընդամենը | **19** |

ՄՈՒՀ-երի կարծիքներն ուսումնասիրելուց հետո պարզ դարձավ, որ, չնայած մեծամասնությունը գտնում է, որ ինստիտուցիոնալ կարողությունների ինքնավերլուծության ձևաչափը միանգամայն կիրառելի է և խոչընդոտների չեն հանդիպել, այնուամենայնիվ երբեմն ոչ հստակ ձևակերպումները սահմանափակել են ՄՈՒՀ-երին իրականացված աշխատանքները հավուր պատշաճի ներկայացնել: Ինչպես նաև չափորոշիչների շատ լինելը հանգեցրել է ժամանակային խնդիրների: Միևնույն ժամանակ, եղել են ուսումնական հաստատություններ, որոնց համար դժվարություն է առաջացրել ձևաչափը լրացնելը, քանի որ վերջիններիս կարծիքով ձևաչափը ընդհանրական է և հաշվառված չէ դասական բուհական համակարգի հետ չնույնականացվող ուսումնական հաստատությունների առանձնահատկությունները:
Որպես փոփոխության անհրաժեշտություն տեսնում են հարցադրումների կոնկրետացումն ու հստակեցումը:

Հետազոտության շրջանակներում ինքնավերլուծության ձևաչափի բովանդակությունը դիտարկվել է հետևյալ տեսանկյուններից՝

- որքանով է վերջինս սահմանափակում կամ օգնում ինքնավերլուծություն իրականացնելիս,
- արդյոք չափանիշները/չափորոշիչները լրացուցիչ մեկնաբանման կարիք ունեն, թե հասկանալի են,
- արդյոք ձևաչափում ներկայացված հիմքերը խանգարում էին, թե ուղղորդում:




Համաձայն հետազոտության արդյունքում ստացված ՀՀ ՄՈՒՀ-երի տրամադրած տեղեկատվության՝ ***ինքնավերլուծության ձևաչափն*** օգնում է և ընդգրկում է բոլոր անհրաժեշտ տիրույթները: Վերջիններս գտնում են, որ ձևաչափի բովանդակությունը լիարժեք հնարավորություն է տալիս ՄՈՒՀ-ին ինքնագնահատում կատարելու և ախտորոշելու ՄՈՒՀ-ի գործունեությունը: Չևաչափը ոչ միայն ինքնավերլուծության լավագույն ուղենիշ է, այլև սովորեցնում է համակարգված աշխատելու, աշխատանքի իրականացման փուլերը միմյանցով պայմանավորելու և գնահատման պայմաններ ստեղծելու: Ավելին, ֆոկուս խմբային քննարկումների ժամանակ մասնակիցները նշեցին, որ ձևաչափից զատ շատ օգտակար և նպատակային էին ըստ չափորոշիչների սահմանված ցուցիչները, որոնք ներկայացվել են վերապատրաստումների և անձնակազմի հետ պարբերաբար հանդիպումների ժամանակ: Այդուհանդերձ, ՄՄՈՒՀ-ների ներկայացուցիչները առաջարկում են ձևաչափը տարբերակել ըստ կրթական մակարդակների (բարձրագույն/ միջին մասնագիտական): Ինչպես նաև համարում են, որ որոշ չափորոշիչներ կարելի է միավորել՝ վերլուծությունն ավելի թիրախային դարձնելու նպատակով:

***Չափանիշների և չափորոշիչների*** մեկնաբանության հարցի վերաբերյալ ՄՈՒՀ-երը համարում են, որ վերջիններիս համար հնարավորինս չափելի պահանջներ պետք է սահմանվեն: Եթե չափանիշների պարագայում կարծում են, որ վերջիններս ուղղորդող են, ապա չափորոշիչների դեպքում առաջարկում են հնարավորինս չափելի և գնահատելի ցուցիչներ սահմանել՝ տարաբնույթ մեկաբանություններից խուսափելու համար: Չնայած վերջիններս սահմանում են նվազագույն պահանջները, հասկանալի լինելու վերաբերյալ որոշ ՄՈՒՀ-երի ներկայացուցիչներ նշել են, որ թյուրըմբռնումներ կան, ձևակերպումներն ու տերմինները հավելյալ հստակեցման և մեկնաբանման անհրաժեշտություն ունեն: Մեկ ՄՈՒՀ-ի պնդմամբ չափորոշիչները ոչ միշտ են հնարավորություն տալիս արտահայտել ուսումնական հաստատության

առանձնահատկությունը: Հստակեցումից զատ, որպես առաջարկություն ներկայացվել է չափորոշիչների թվի պակասեցումը կամ որոշ չափորոշիչների միավորումը:
Ինչ վերաբերում է ձևաչափում առկա ***հիմքերին***՝ վերջիններս ավելի շատ ուղղորդող բնույթ ունեն, միևնույն ժամանակ, որոշ դեպքերում կարծիք հնչեց, որ պահանջվող հավելվածները չափազանց շատ են, իսկ հավաքելը բավական ժամանակատար:
Ինքնավերլուծության ձևաչափի կառուցվածքը և բովանդակությունը բազմակողմանի դիտարկելուց հետո, հետազոտության շրջանակներում փորձել ենք նաև պարզել՝ որքանով օգտակար կլինի չափանիշ/չափորոշիչների վերաբերյալ հստակ ուղենիշների մշակումը, և թե վերջիններս որքանով ուղղորդող կամ սահմանափակող կարող են լինեն ինքնավերլուծության իրականացման գործընթացում: Չնայած որ նախորդ հարցերի շրջանակներում ուսումնական հաստատություններն արդեն իսկ անդրադարձել են վերջիններիս անհրաժեշտությանը:

| Ինքնավերլուծությունն իրականացնելիս որքան՞վ արդյունավետ կլիներ չափանիշ/չափորոշիչների վերաբերյալ հստակ ուղենիշների առկայությունը: Առավելությունները: | Պատասխանների հաճախականությունը |
|---|---|
| Ձևակերպումները/պահանջները ավելի հստակ կլինեին, կունենան կողմնորոշիչ նշանակություն և տարընթերցումների տեղիք չէին տա | 38% |
| Ինքնավերլուծության գործընթացն ավելի արդյունավետ կլիներ | 29% |
| Հնարավորություն կտար ավելի նպատակային և օբյեկտիվ գնահատում իրականացնելու | 14% |
| ՄՈՒՀ-ի իրական պատկերն ավելի ամբողջական ու համապարփակ ներկայացնել | 9% |
| Չափորոշիչները կարող են դիտարկվել որպես ուղենիշներ | 10% |
| **Ընդամենը** | **100** |

Վերը ներկայացված աղյուսակից պարզ է դառնում, որ ուղենիշների առկայությունն ուսումնական հաստատությունների ներկայացուցիչները համարում են անհրաժեշտություն: Վերջիններս գտնում են, որ ուղենիշները կհստակեցնեն չափանիշ/չափորոշիչները, հետևաբար կնվազեն նաև տարընթերցումները և հնարավոր կլիներ չափելի ներկայացնել փորձագետների կողմից ակնկալվող հիմնավորումները: Միևնույն ժամանակ, ֆոկուս խմբային քննարկումների ժամանակ նշվեց, որ ուղենիշների մեկնաբանում իրականացվում է ՈԱԱԿ-ի կողմից իրականացվող խորհրդատվությունների և վերապատրաստումների շրջանակներում:

| Ինքնավերլուծությունն իրականացնելիս որքան՞վ արդյունավետ կլիներ չափանիշ/չափորոշիչների վերաբերյալ հստակ ուղենիշների առկայությունը: Սահմանափակումները: | Պատասխանների հաճախականությունը |
|---|---|
| Տարբեր պրոֆիլի բուհերի դեպքում կարող է ՄՈՒՀ-ի առանձնահատկությունը կորել | 19% |
| Կսահմանափակեին ՄՈՒՀ-ի վերլուծության ստեղծագործական և յուրահատուկ մոտեցմանը | 9% |
| Կսահմանափակվի ազատ շարադրանքի հնարավորությունը | 10% |
| Չկան | 62% |
| **Ընդամենը** | **100** |

Հետազոտության շրջանակներում անդրադարձել ենք նաև ինքնավերլուծության իրականացման գործընթացում ***ՈԱԱԿ-ի կողմից տրամադրված խորհրդատվությունների արդյունավետությանը***: Տրամադրված խորհրդատվությունը դիտարկվել է հետևյալ տեսանկյունից՝

— որքանով արդյունավետ էր,
— որքանով համակարգված էր,
— որքանով նպատակային էր և
— որքանով թիրախավորված էր:









Ինչպես կարելի է տեսնել գծապատկերներում, ՄՈՒՀ-երում ՈԱԱԿ-ի կողմից իրականացված խորհրդատվություններն, ընդհանուր առմամբ, ծառայել են իրենց նպատակին, ինչի մասին են վկայում հետազոտությանը մասնակիցների ճնշող մեծամանության կողմից տրված դրական գնահատականները: Հարցին՝արդյոք ունեն ինքնավերլուծության իրականացման վերաբերյալ վերապատրաստման անհրաժեշտություն, ՄՈՒՀ-երի ճնշող մեծամասնությունը պատասխանել է դրական: Որպես վերապատրաստման թեմաներ առանձնացրել են՝

| Նշել թեմաները: |
|---|
| Չափանիշ/չափորոշիչների մեկնաբանում |
| Ինքնավերլուծության իրականացման սկզբունքները |
| Ծրագրային հավատարմագրում |
| Որակի ապահովման համակարգի գնահատում և մշտադիտարկում (արժանահավատ գործուն մեխանիզմներ և գործիքակազմ,) |
| Տեղեկատվության հավաքագրում և վերլուծություն |
| Արտաքին և ներքին շահակիցներին ներգրավելու և նրանց մոտիվացնելու մեխանիզմների և ձևերի ներկայացում |
| «Հետազոտություն» բաժնի վերլուծություն՝ինչպիսի քանակական և որակական տվյալներ ներկայացնել |
| ՌԾ-ի, կառավարման համակարգի, ՄԿԾ-ների և միջազգայնացմանը միտված գործընթացների արդյունավետության վերլուծություն |
| Վերջնարդյունքահեն դասընթացների մշակում |
| Բարելավման պլանի մշակում |

Հետազոտության շրջանակներում ինքավերլուծության հիմնախնդիրները փորձել ենք քննարկել նաև փորձագետների հետ: Փորձել ենք պարզել՝ հատկապես ինչպիսի խնդիրների հետ են առնչվել ինքնավերլուծությունն ուսումնասիրելիս և ինչպիսի խնդիրների առկայության դեպքում ինքնավերլուծությունը պետք է վերադարձնել ՄՈՒՀ-ին՝ վերանայելու: Թե՛ հարցման ժամանակ, թե՛ ֆոկուս խմբային քննարկումների ժամանակ անդրադարձել են այն հարցին, թե ինքնավերլուծության փաթեթում ինչպիսի հիմնավորող տվյալների (թե քանակական, թե որակական) անհրաժեշտություն են տեսնում փորձագետները՝ փորձաքննության արդյունավետությունը բարձրացնելու նպատակով:

| Ինչպիսի՞ խնդիրների առկայության դեպքում ինքնավերլուծությունը պետք է վերադարձնել ՄՈՒՀ-ին՝վերանայելու | Պատասխանների հաճախականությունը |
|---|---|
| Եթե վերլուծությունները շեղվում են չափանիշ/չափորոշիչների պահանջից, իսկ մեկնաբանությունները ըստ չափորոշիչների չեն ներկայացվում | 31 |
| Երբ ՄՈՒՀ-ի ներկայացրած տեղեկատվությունը կրում է պատմողական բնույթ, Եթե ինքնավերլուծությունը ամբողջովին նկարագրական է և ոչ վերլուծական | 19 |
| SWOT վերլուծությունը պատշաճ ձևով չիրականացնելու դեպքերում | 2 |
| Եթե ինքնավերլուծությունը պարունակում է հակասական տվյալներ, իրարամերժ դրույթներ, ներկայացված է մակերեսային տեղեկատվություն կամ տեղեկատվությունն արժանահավատ չէ | 5 |
| Եթե բացակայում են հիմքերը կամ հղումները ակտիվ չեն | 7 |
| Եթե ինքնավերլուծության ծավալները նախատեսվածից մեծ են | 4 |
| Եթե զեկույցը տեխնիկապես չի համապատասխանում պահանջներին | 2 |

Ինչպես տեսնում ենք, հիմնական խոչընդոտը կապված է չափանիշ/չափորոշիչների պահանջը սխալ ընկալելու հետ: Ինքնավերլուծության զեկույցներում հաճախ գերակշռում են նկարագրությունները, զեկույցների վերլուծականությունը շատ քիչ է, մասնավորապես՝

- բացակայում են **խորքային վերլուծությունները** (քանակական և որակական տվյալներ, քանակական տվյալների դինամիկայի վերլուծություն, կրճատման կամ ավելացման պատճառների բացահայտում) տարբեր գործընթացների արդյունավետության վերաբերյալ,
- ոչ միշտ են կիրառվում ՈՆԱ անհաժեշտ **գործիքակազմեր** տարբեր գործընթացների արդյունավետությունը հիմնավորելու նպատակով: Օր՝
  - դասավանդման և ուսումնառության որակի ապահովում,
  - շրջանավարտների զբաղվածություն,
  - կառավարում:

Ինքնավերլուծության զեկույցներում ՄՈՒՀ-երը նշում են, որ իրականացվել են տարաբնույթ հարցումներ, սակայն չի նշվում, թե վերհանված խնդիրների հիման վրա ինչ է իրականացվել կամ ինչպես են այդ արդյունքները հետագայում կիրառվելու կամ կիրառվել, որքանով է վերհանված տեղեկատվությունը հիմք հանդիսացել որոշումների կայացման համար: Մեծամասամբ բացակայում է որակի բարելավման շրջանակը, որը ակադեմիական ստորաբաժանումներին կխրախուսեր ուսումնասիրել դասավանդման և ուսումնառության, հետազոտության որակը, վերհաներ ռիսկերը, բացահայտել ինչն է լավ աշխատում, ինչը՝ ոչ: Հաճախ բացակայում է թափանցիկ տեղեկատվությունը ՈՆԱ գործընթացների վերաբերյալ: ՈՆԱ համակարգը ոչ միշտ է փոխկապակցված ռազմավարական պլանավորման և կառավարման հետ:

ՄՈՒՀ-երի վերլուծությունները հիմնականում չեն արտացոլում ՊԻԳԲ շրջափուլը: Ուսումնական հաստատություններում գործընթացները ոչ միշտ են իրականացվում որակի բարելավման ՊԻԳԲ շրջափուլին համապատասխան, իսկ վերլուծություններում ՄՈՒՀ-ը չի ներկայացվում՝ որ փուլում է գտնվում: Որոշ ուսումնական հաստատությունների ինքնավերլուծության

զեկույցներում նույնիսկ խախտված է ցանկալիի և իրականի սահմանները (փաստացի իրականացվող գործընթացներ և պլանավորվող գործընթացներ):
Հաճախ զեկույցներում ՄՈՒՀ-երը նշում են, որ մշակվել են քաղաքականություններ, ընթացակարգեր, կանոնակարգերը, իրականացրել են վերանայումներ և բարեփոխումներ, սակայն պարզ չէ՝ ինչու, ինչ կարիքների հիման վրա, արդյո՞ք դա բխել է գործընթացները կանոնակարգելու գաղափարից: Թե որքանով են արդյունավետ այդ քաղաքականությունները, ընթացակարգերն ու կիրառվող գործիքակազմը և ինչ խնդիրներ են վերհանվել կամ առաջացել դրանց վերանայման գործընթացում, չի քննարկվում:
Ձևաչափերում առկա SWOT վերլուծությունները հաճախ չեն բխում չափանիշի մակարդակով ներկայացված վերլուծությունից, ուժեղ և թույլ կողմերը հիմնականում հակադրումներ են, հնարավորությունները և խոչընդոտները շատ վերացական են և այդ ամենը միասին հնարավորություն չի ընձեռում հաստատությանն իրականացնել արդյունավետ պլանավորում: Որպես ուժեղ կողմեր ներկայացված են կառույցները և ոչ թե նրանց մատուցած ծառայությունների արդյունավետության վերլուծությունը: Ըստ էության «ուժեղ կողմերի» և «հնարավորությունների» թվարկումները նույն կարգի են և տարբերակված չեն ըստ ներքին հնարավորությունների և արտաքին պայմանների: Իսկ «վտանգներում» հիմնականում նշվում են արդեն իսկ համալսարանի համար թույլ կողմերը: Վերլուծված չեն, թե ինչպես օգտագործել հնարավորությունները գործող թույլ կողմերը վերացնելու համար, կամ հակառակը չի երևում, թե ինչպես են նախատեսում կանխել վտանգները, որպեսզի վերջիններս չանդրադառնան առկա ուժեղ կողմերի վրա:
Եվ որպես խնդրի լուծում փորձագետներն առաջարկում են ինքնավերլուծության զեկույցը հետ վերադարձնել բուհերին, եթե գնահատումն արդյունավետ իրականացնելու համար անհրաժեշտ տեղեկատվության մինիմալ շեմն ապահովված չէ:

| Ինքնավերլուծության փաթեթում ինչպիսի՞ հիմնավորող տվյալների (քանակական, որակական) անհրաժեշտություն եք տեսնում փորձաքննության արդյունավետությունը բարձրացնելու նպատակով: | Պատասխանների հաճախականությունը |
|---|---|
| Հավելյալ տվյալների անհրաժեշտություն չկա. ձևաչափում և էլ. հարցաշարում գնահատում իրականացնելու համար անհրաժեշտ տեղեկատվությունը ներառված է | 32 |
| Վերլուծություններ. քանակական և որակական հիմնավորումներ | 20 |
| Շրջանավարտների մասին լայնածավալ տեղեկատվություն | 4 |
| Ներկայացված տվյալների դինամիկայի վերլուծություններ. մի քանի տարվա ցուցանիշների դինամիկա | 8 |
| Նախորդ գնահատման արդյունքում մշակված բարելավման ծրագրի կատարողականի գնահատում ըստ խորհրդատվությունների | 10 |

Հիմնվելով հետազոտության արդյունքների վրա՝ կարելի է փաստել, որ ի տարբերություն նախորդ տարիների, հետազոտությանը մասնակցած փորձագետների ճնշող մեծամասնությունը հավելյալ տվյալների անհրաժեշտություն չի տեսնում: Ավելին, ֆոկուս խմբային քննարկումների ժամանակ, այն փորձագետները, ովքեր ներգրավված են եղել հավատարմագրման գործընթացներում մեկից ավելի անգամներ, նշեցին, որ իրենց դիտողությունների հիման վրա վերանայվել են ՈԱԱԿ-ի էլեկտրոնային հարցաշարն ու ինքնավերլուծության ձևաչափը՝ պահանջվող տեղեկատվությունը դարձնելով ավելի ամբողջական և լիարժեք գնահատում իրականացնելու համար: Այդուհանդերձ հնչեցին կարծիքներ, որ ավելի շատ վերլուծական տվյալների (ոչ թե ուղղակի փաստերի ու թվերի նկարագրություններ) անհրաժեշտություն այնուամենայնիվ կա: Այսինքն, ներկայացված լինի ոչ թե քանակական տվյալ, այլ դրա դինամիկայի վերլուծությունը, կրճատման կամ ավելացման պատճառների բացահայտումը և այլն:

# ՄԱՍ 3. ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԽՄԲԻ ՁԵՎԱՎՈՐՈՒՄ ԵՎ ԿԱԶՄ

## 3.1 ՓՈՐՁԱԳԵՏՆԵՐԻ ՀԱՎԱՔԱԳՐՈՒՄ, ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՈՒՄ ԵՎ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲԱՇԽՈՒՄ

Արտաքին փորձագետների ընտրությունը հավատարմագրման գործընթացի կարևորագույն խնդիրներից մեկն է, քանի որ հավատարմագրման որոշումների ճանաչումը մեծապես կախված է ընտրության չափանիշների պահպանումից և սահմանված ընթացակարգերի իրականացումից: ՈԱԱԿ-ի փորձագետների ընտրության չափանիշները և համապատասխան գործընթացները համահունչ են Հավատարմագրման եվրոպական կոնսորցիումի սահմանած չափորոշիչներին, փորձաքննություն իրականացնելու համար ընտրվում են բարձր մասնագիտական որակներ ունեցող, անվանի տեղացի և միջազգային փորձառու մասնագետներ, ովքեր արդեն հմտացած են որակի ապահովման գործընթացներ իրականացնելու մեջ:

Փորձագիտական խմբերը որպես կանոն բաղկացած են՝

— պրոֆեսորադասախոսական կազմի ներկայացուցիչներից,
— մասնագիտական կամ տնտեսության տվյալ ոլորտի ներկայացուցիչներից,
— կրթության կառավարման ոլորտի ներկայացուցիչներից,
— ուսանողներից,
— գործատուներից:

Հետազոտության շրջանակներում փորձել ենք պարզել՝ որոնք են այն **3 կարևորագույն մասնագիտական ոլորտները, որոնց ներկայացուցիչներին բուհերը կցանկանային տեսնել փորձագիտական խմբի կազմում**:

| Փորձագիտական խմբի կազմում ներգրավված մասնագիտական ոլորտների ներկայացուցիչներ | Պատասխանների հաճախականությունը |
|---|---|
| 1. Պրոֆեսորադասախոսական կազմ | 12 |
| 2. Մասնագիտական կամ տնտեսության ոլորտի ներկայացուցիչ | 10 |
| 3. Գործատու | 12 |
| 4. Կրթության կառավարման ոլորտի ներկայացուցիչ | 16 |
| 5. Ուսանողներ | 9 |
| **Ընդամենը** | **59** |




Հիմք ընդունելով հետազոտության արդյունքները՝ կարելի է փաստել, որ հարցվողների մեծամասնության կարծիքով փորձագիտական խմբերում պետք է անպայման ներգրավված լինեն գործատուներ և կրթության կառավարման ոլորտի ներկայացուցիչներ, ովքեր անմիջականորեն առնչվում են ուսումնական գործընթացի կառավարմանը և տիրապետում են ոլորտի առանձնահատկություններին: Իսկ ՊԴ կազմի ներկայացուցչի ներկայությունը ցանկալի է, քանի որ քննարկվում են ՄԿԾ-ները, դրանց բովանդակությունն ու առանձնահատկությունները: Մասնագիտական ոլորտի ներկայացուցչի առկայությունը կարևոր է ՄՈՒՀ-մասնավոր հատված-տնտեսություն փոխգործակցությունն ամրապնդելու և իրական շահերը վերհանելու նպատակով:

Համակարգողների համոզմամբ, ոչ պակաս կարևոր հիմնախնդիր է նաև փորձագետների ընտրության և հավաքագրման ընթացակարգի արդյունավետ իրականացումը: Վերջիններիս պնդմամբ, գործընթացը պետք է մշտական ուշադրության կենտրոնում լինի, իսկ ընթացակարգը՝ մշտապես կատարելագործվի:

Բացի փորձագետների այս կամ այն մասնագիտական ոլորտի պատկանելիությունից, վերջիններիս ընտրության ժամանակ հաշվի են առնվում նաև նրանց գրավոր և բանավոր հաղորդակցվելու, հանդիպումներ անցկացնելու, մեծ ծավալի տեղեկատվություն վերլուծելու կարողությունները, ինչպես նաև անձնային այնպիսի հատկությունները, որոնք թույլ կտան ապահովել անկողմնակալ և օբյեկտիվ գնահատում: Վերոնշյալ հմտությունները գործընթացում կիրառելու, արդյունավետ և նպատակային փորձաքննություն իրականացնելու համար, ՈԱԱԿ-ը պարբերաբար իրականացնում է փորձագիտական խմբի անդամների վերապատրաստումներ: Վերապատրաստումներն իրականացվում են երկու փուլով՝1. Փորձագիտական բազայում ընդգրկվելու միտումով և 2. արդեն իսկ ընտրված փորձագետների վերապատրաստում գործընթացն իրականացնելու նպատակով: Տվյալ հետազոտության շրջանում ևս անդրադարձել ենք փորձագետների շրջանում իրականացված վերապատրաստումներին՝ նպատակ ունենալով պարզել **վերապատրաստումների արդյունավետությունը** և **բավարարվածությունը անցկացված վերապատրաստումներից:**

| Բավարարվածություն փորձագիտական վերապատրաստումներից | Պատասխանների հաճախականությունը |
|---|---|
| Լիովին բավարարված եմ | 36 |
| Ավելի շուտ բավարարված եմ | 16 |
| Ավելի շուտ բավարարված չեմ | |
| Ընդհանրապես բավարարված չեմ | |
| ԴՊ | 3 |
| **Ընդամենը** | **55** |




Ընդհանրացնելով հետազոտության արդյունքները՝ կարելի է ասել, որ վերապատրաստումներն ընդհանուր առմամբ արդյունավետ են եղել. պարզաբանել են ողջ գործընթացի նպատակը, կարևորությունը՝քայլ առ քայլ ներկայացնելով գործընթացի փուլերը: Ներկայացվել է արտաքին գնահատման իրականացման ողջ մեթոդաբանությունն ու ընթացակարգը, փորձագետի դերը և պարտականությունները, ինչպես նաև գնահատումներն առավել արդյունավետ իրականացնելու ուղիները, որոնք շատ են օգնել փորձագիտական աշխատանքն արդյունավետ կազմակերպելու և իրականացնելու գործում: Ընդհանուր առմամբ, մասնակիցները գտնում են, որ վերապատրաստումները ծառայել են իրենց բուն նպատակին՝ ապահովվել և տրամադրվել է տեղեկատվություն առաջիկա քայլերի մասին, սակայն փորձագետները նշել են, որ կցանկանային, որպեսզի վերջիններս լինեն շարունակական: Որպես առաջարկություն ներկայացրել են նախկինում ի հայտ եկած խնդիրների քննարկումը: Ինչպես նաև, փորձագետները գտնում են, որ վերապատրաստումները պետք է լինեն տարբերակված. արդյունավետ չէ, երբ միևնույն խմբում ներգրավված են և սկսնակ, և փորձառու փորձագետներ:

| Բավարարվածություն փորձագիտական վերապատրաստումներից.<br>Խնդրում ենք հիմնավորել Ձեր պատասխանը: |
|---|

Վերապատրաստումները նպաստեցին նոր գիտելիք, հմտությունների և կարողությունների ձեռքբերմանը՝ գործընթացն արդյունավետ իրականացնելու նպատակով

Վերապատրաստումների մեթոդաբանությունը ճիշտ էր ընտրված (նպաստում էր անհրաժեշտ հմտությունների/պատրաստվածության ձեռքբերմանը), իսկ նյութի մատուցումն իրականացվում էր կոմպետենտ մոտեցմամբ

Վերապատրաստումները եղել են արդյունավետ և օգտակար

Վերապատրաստումները պարզաբանում էին գործընթացի նպատակն ու կարևորությունը

Վերապատրաստողները բանիմաց և պատրաստված մասնագետներ էին, ովքեր պատրաստ էին իրենց փորձն ու գիտելիքները փոխանցել մասնակիցներին

Աշխատանքային պրոցեսում ավելի շատ բան ենք սովորել, քան վերապատրաստման ժամանակ

Վերապատրաստումները պետք է կրեն շարունակական բնույթ

Հետազոտության շրջանակներում փորձել ենք ուսումնասիրել իրականացված **վերապատրաստումներն օգտակարության, համակարգվածության, նպատակայնության և թիրախավորվածության** տեսանկյունից: Ընդհանուր առմամբ, հետազոտության արդյունքները ցույց տվեցին, որ վերապատրաստումները եղել են նպատակային և օգտակար:













Վերապատրաստումների **օգտակարությունն ու նպատակայնությունը** բարձր է գնահատվել փորձագետների կողմից, քանի որ դրանք օգնում ու ուղղորդում էին իրենց աշխատանքի կազմակերպմանը: Վերջիններս համարում են, որ վերապատրաստման **թիրախները** ճիշտ էին ընտրված: Մասնակիցները դրական են արձագանքել նաև վերապատրաստման նյութի և կազմակերպման **համակարգվածության** վերաբերյալ:

| Խնդրում ենք հիմնավորել Ձեր պատասխանը: | Պատասխանների հաճախականություն |
|---|---|
| 1. Օգտակար էին և նպատակային, քանի որ հստակեցվեցին փորձագետի հետագա քայլերը, դերը, քննարկվեցին բոլոր ընթացակարգային հարցերը | 18 |
| 2. Վերապատրաստումները շատ նպատակային էին, քանի որ ձեռքբերված հմտությունները օժանդակեցին գործընթացի իրականացման ժամանակ | 16 |
| 3. Թեև վերապատրաստումներն ընդգրկուն էին, և տրամադրվում էին անհրաժեշտ ուղեցույցներ, գործընթացն ամբողջովին պատկերացնում ես, երբ մեկ անգամ անցնում ես բոլոր փուլերով | 6 |
| 4. Թիրախները ճիշտ էին ընտրված, չնայած ըստ պատրաստվածության մակարդակի տարանջատման անհրաժեշտություն կա | 2 |
| 5. Գործնական խնդիրներն ավելացնելու կարիք կա | 6 |
| 6. Առաջացած խնդիրների և հնարավոր լուծումների քննարկումը շատ օգտակար կարող է լինել | 5 |
| **Ընդամենը** | **53** |

Փորձագիտական վերապատրաստումները նպատակ ունեին՝

— զարգացնելու անհրաժեշտ մասնագիտական հմտություններ՝արտաքին փորձաքննություն իրականացնելու համար,
— տրամադրելու անհրաժեշտ տեղեկատվություն ՈԱԱԿ-ի գործունեության, առաքելության, հավատարմագրման գործընթացի և չափանիշների մասին,
— տրամադրելու արտաքին գնահատում իրականացնելու համար անհրաժեշտ փաստաթղթեր:

Հետազոտության շրջանակում փորձել ենք անդրադառնալ բոլոր վերոնշյալ կետերին: Առաջինի դեպքում ուսումնասիրել ենք՝ **որքանով բավարար էին ՈԱԱԿ-ի կողմից իրականացված վերապատրաստումները փորձաքննություն իրականացնելու համար անհրաժեշտ հմտությունների ձևավորման տեսանկյունից**:

| Փորձաքննություն իրականացնելու համար անհրաժեշտ հմտությունների ձևավորում | Պատասխանների հաճախականությունը |
|---|---|
| Լիովին բավարար էին | 24 |
| Ավելի շուտ բավարար էին | 25 |
| Ավելի շուտ բավարար չէին | 3 |
| Ընդհանրապես բավարար չէին | 1 |
| ԴՊ | 1 |
| **Ընդամենը** | **54** |




Ինչպես տեսնում ենք փորձագետների պնդմամբ վերապատրաստումները ծառայել են իրենց նպատակին: Այդ մասին են վկայում, հարցվածների 90%-ի դրական պատասխանները, այն մասին՝ որ իրականացված վերապատրաստումները բավարար էին անհրաժեշտ հմտությունները ձևավորելու համար: Այդուհանդերձ, վերապատրաստումների

արդյունավետությունը փորձել ենք գնահատել նաև համակարգողների շրջանում անցկացված հարցումների և ֆոկուս խմբային քննարկումների արդյունքում: Համակարգողների համար կողմնորոշիչ են հանդիսացել գործընթացի ընթացքում ծագած խնդիրները և փորձագետների դրսևորած վարքագծիք: Վերջիններիս պնդմամբ ևս վերապատրաստումները ծառայել են իրենց նպատակին և արդյունավետ են եղել (100%), այդուհանդերձ գտնում են, որ գործնական բաղադրիչը վերապատրաստումներում թույլ է, դերային խաղերը պետք է շատացվեն: Մասնավորապես փորձագետները դժվարանում են զեկույց գրելիս, ինչպես նաև դեռևս թերանում են հարցադրումներ կատարելիս: Համակարգողներն անհրաժեշտություն են տեսնում նաև ՄԿԾ-ների վերլուծության վերաբերյալ վերապատրաստումների իրականացման, մասնավորապես՝ առկա խնդիրների վերհանում, ուժեղ և թույլ կողմերի դուրսբերում: Վերջիններս հիմնավորում են, որ նման բացերի առկայությունը փորձագետների մոտ դժվարացնում էր գործընթացը և յուրաքանչյուր հարցի քննարկման վրա նախատեսվածից շատ ժամանակ էր գնում: Որքան էլ տարօրինակ հնչի, համակարգողները կարծում են, որ ՄՈՒՀ-ների գործընթացում ներգրավվող մասնակիցներին ևս անհրաժեշտ է վերապատրաստել, թե ինչպես պատասխանել փորձագետների հարցերին:

Այնուամենայնիվ, լրացուցիչ վերապատրաստումների անհրաժեշտություն տեսնում են նաև փորձագետները: Ստորև ներկայացված են այն հիմնական թեմաները, որոնց շուրջ փորձագետները և համակարգողները կցանկանային, որ կառուցված լիներ վերապատրաստման նյութը՝

| Վերապատրաստման թեմաներ | Պատասխանների հաճախականությունը |
|---|---|
| 1. Ճիշտ հարցադրումներ կատարում | 9 |
| 2. Ինքնավերլուծությունը ճիշտ շեշտադրմամբ ուսումնասիրում | 2 |
| 3. Փաստաթղթերի ուսումնասիրություն և եզրահանգումների իրականացում | 4 |
| 4. Փորձագիտական զեկույցի պատրաստում՝մասնավորապես փաստերի և դատողությունների տարանջատում<br>Փաստերի հիման վրա դատողությունների ձևակերպում | 13 |
| 5. Տվյալների համադրում և վերլուծություն | 3 |
| 6. Չափանիշ/չափորոշիչների մեկնաբանություն | 7 |
| 7. ՄԿԾ-ների վերլուծություն. առկա խնդիրների վերհանում, ուժեղ-թույլ կողմերի դուրսբերում | 11 |
| 8. Հավելյալ վերապատրաստումների անհրաժեշտություն չենք տեսնում | 4 |
| **Ընդամենը** | **53** |

Ինչպես արդեն նշեցինք վերևում, վերապատրաստումները նաև նպատակ ունեն բարձրացնելու գործընթացների և առհասարակ ՈԱԱԿ-ի գործունեության վերաբերյալ փորձագետների իրազեկության մակարդակը: Այդ պատճառով հետազոտության շրջանակներում ուսումնասիրել ենք ՈԱԱԿ-ի կողմից տրամադրված տեղեկատվության արդյունավետությունը և օգտակարությունը: Փորձել ենք պարզել՝որքանով են վերապատրաստված փորձագետները բավարված **ՈԱԱԿ-ի կողմից տրամադրված տեղեկատվությամբ**, մասնավորապես՝

- հավատարմագրման գործընթացի նպատակների և խնդիրների վերաբերյալ,
- հավատարմագրման ընթացակարգի վերաբերյալ,
- գործընթացում փորձագետի դերի վերաբերյալ,
- գնահատման մեթոդների վերաբերյալ,

— չափանիշների և չափորոշիչների մեկնաբանությունների վերաբերյալ:



















ՀՀ ՄՈՒՀ-երում հավատարմագրում իրականացրած փորձագետների շրջանում իրականացված հարցման, ինչպես նաև ֆոկուս խմբերի արդյունքների ամփոփումը ցույց է տալիս, որ ՈԱԱԿ-ի կողմից տրամադրված տեղեկատվությունից բավարար է փորձաքննություն իրականացնելու համար, քանի որ տրամադրվել է նորմատիվային -օրենսդրական փաստաթղթերի ամբողջական փաթեթ, աշխատանքային ձևաչափերը: Հարցվածների միայն 9%-ը մասամբ բավարարված չէ չափանիշ/չափորոշիչների մեկնաբանության վերաբերյալ տրամադրված տեղեկատվությամբ: Որպես հիմնավորում պնդում են, որ խնդիրը ոչ այնքան չափանիշ/չափորոշիչների մեկնաբանման վերաբերյալ տրամադրված տեղեկատվությունն էր, այլ բուն չափանիշ/չափորոշիչների վերանայման անհրաժեշտությունը: Կան չափորոշիչներ, որոնք պարունակում են իրարամերժ դրույթներ և լայն քննարկումների տեղիք են տալիս:

Հետազոտության շրջանակում փորձել ենք նաև պարզել՝արդյոք փորձագետների կարողացել են իրենց **հմտություններն ու կարողությունները լիովին օգտագործվել փորձաքննության գործընթացում**:

| Կոմպետենցիաների օգտագործում փորձաքննության գործընթացում | Պատասխանների հաճախականությունը |
|---|---|
| Այո | 63 |
| Ոչ | 4 |
| **Ընդամենը** | **67** |




Ինչպես ցույց տվեցին հետազոտության արդյունքները, փորձագետների զգալի մասը կարողացել է ձեռքբերված հմտությունները և կարողությունները օգտագործել փորձաքննություն իրականացնելիս: Ավելին, **փորձագետների 97%-ը ցանկություն է հայտնել որպես փորձագետ կրկին մասնակցելու հավատարմագրման գործընթացներում**: Ինչպես նաև, միջազգային փորձագետներն անգամ ցանկություն և պատրաստակամություն են հայտնել հետագայում ներգրավվել ՀՀ որակի ապահովման շրջանակի և առհասարակ կրթական համակարգի բարելավման աշխատանքներում:

ՈԱԱԿ-ը չափազանց կարևորում է անկախ և անկողմնակալ արտաքին փորձագիտական գնահատման իրականացումը, այդ իսկ պատճառով միջոցներ է ձեռնարկում՝ երաշխավորելու, որ փորձագետները չենթարկվեն անհարկի ազդեցության կամ ճնշման, գործեն առավելագույնս օբյեկտիվ և անկախ: Այդ նկատառումներից ելնելով՝ հետազոտության շրջանակներում ևս անդրադարձել ենք **փորձագետների անկախությանը**: Փորձել ենք պարզել՝որքանով էին վերջիններս անկախ՝

- փորձաքննություն իրականացնելիս,
- գնահատում իրականացնելիս և
- որոշումներ կայացնելիս:
-










Ինչպես տեսնում ենք, այս գործընթացներն իրականացնելիս փորձագետները գործել են առավելագույնս անկախ: Ինչպես փորձագետներն են փաստում, որևէ խոչընդոտ չի եղել, որը կսահմանափակեր անկախ և անկողմնակալ փորձաքննություն իրականացնելու գործընթացը, ինչպես նաև ազատ և անկաշկանդ արտահայտելու իրենց կարծիքները: Փորձագետների անկախության մասին վկայում են նաև համակարգողները:

Փորձագիտական խմբի ներսում **աշխատանքների և պատասխանատվությունների ճիշտ բաշխումը** գործընթացի հաջողության կարևորագույն գրավականներից մեկն է: Ուստի հետազոտության շրջանակներում անդրադարձ կատարվեց նաև այս հիմնախնդրին: Թե փորձագետների, թե համակարգողների պնդմամբ պատասխանատվությունների բաշխումը

խմբերում համաչափ է եղել: Չնայած յուրաքանչյուր փորձագետ ունեցել է իր պատասխանատվությունների շրջանակը, բոլորը հավասարաչափ հնարավորություն են ունեցել արտահայտելու իրենց կարծիքը, հավասարաչափ ներգրավվելու փորձաքննության գործընթացում: Միայն մեկ դեպքում է եղել, երբ փորձագիտական խմբի ղեկավարը գործընթացի պատասխանատվությունը չի վերցրել իր վրա և համեմատական պասիվություն է դրսևորել, սակայն փորձագետները փոխլրացրել են: Գործընթացի չձախողվելն այս պարագայում պայմանավորված է եղել նրանով, որ յուրաքանչյուր հանդիպման կառավարում նախապես բաշխված է եղել փորձագետների միջև:

ՈԱԱԿ-ը, որպեսզի երաշխավորի մոտեցումների թարմացումը, մշտապես ներառում է 1 կամ 2 միջազգային փորձագետներ յուրաքանչյուր փորձագիտական խմբում: Միջազգային փորձագետները ընտրվում են որակի ապահովման միջազգային հեղինակավոր որևէ կազմակերպության կամ ՈԱԱԿ միջազգային փորձագետների բազայից: Միջազգային փորձագետների ներգրավվածությունը խմբերում դրական է գնահատվում նաև տեղացի փորձագետների և ՄՈՒՀ-երի կողմից: **Միջազգային փորձագետների հետ համագործակցության արդյունավետությունը** պարզելու նպատակով, հետազոտության ընթացքում ևս անդրադրաձել ենք այս հարցին:

| Միջազգային փորձագետի հետ համագործակցություն | Պատասխանների հաճախականությունը |
|---|---|
| Լիովին արդյունավետ էր | 35 |
| Ավելի շուտ արդյունավետ էէ | 10 |
| Ավելի շուտ արդյունավետ չէր | 2 |
| Ընդհանրապես արդյունավետ չէր | 1 |
| **Ընդամենը** | **48** |




Ինչպես տեսնում ենք համագործակցությունը միանգամայն արդյունավետ է եղել: Փորձագետները որպես արդյունավետության բարձրացման խթան տեսնում են միջազգային փորձագետի ներգրավվածությունը գործընթացի հենց սկզբից՝նախնական գնահատման փուլից, (skype հանդիպումների միջոցով): Միջազգային փորձագետներն իրենց հերթին, գտնում են, որ պետք է ներգրավվեն գործընթացի ժամանակացույցը մշակելու պահից: Ինչպես նաև ակնկալում են, որ գործընթացի հենց սկզբից կներկայացվեն ակնկալիքները իրենցից, կծանոթանան ՀՀ կրթական համակարգին, կտեղեկացվեն գործընթացի հաջորդականությանը և ընթացակարգին: Միջազգային փորձագետներն, իրենց հերթին, տեղացի փորձագետների հետ համագործակցությունը գնահատում են շատ արդյունավետ:

## 3.2 ՀԱՄԱԿԱՐԳՈՂԻ ԴԵՐԸ ԵՎ ԱՆՀՐԱԺԵՇՏ ՀՄՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՌԿԱՅՈՒԹՅՈՒՆԸ

Փորձագիտական խմբերը հիմնականում ձևավորվում են վերապատրաստում անցած շահակիցներից, ովքեր ունեն համապատասխան որակավորում և հետաքրքրված են մասնագիտական ուսումնական հաստատության որակով: Փորձագիտական խմբերում ներգրավված է նաև ՈԱԱԿ-ի աշխատակիցը՝որպես գործընթացի համակարգող: Վերջինս համակարգում է փորձագիտական խմբի աշխատանքները, աջակցում է ողջ գործընթացի

պլանավորմանն ու իրականացմանը, ինչպես նաև ապահովում է փորձագիտական խմբի և մասնագիտական ուսումնական հաստատության միջև կապը և հանդես է գալիս որպես հավատարմագրման մեթոդաբանության ապահովման երաշխիք:

Հետազոտության շրջանակում փորձել ենք գնահատել **համակարգողների հետևյալ պարտականությունները՝**

- հետևում էր գործընթացի սահուն ընթացքին և արդյունավետ իրականացմանը (քննարկումների անցկացում, կազմակերպում, ոչ ամբողջական ընկալման կարգավորում),
- պաշտպանում էր փորձագիտական խմբի անդամների իրավունքները,
- կատարում էր իրավիճակի վերլուծություն,
- չպլանավորված դեպքերում կայացնում էր որոշումներ և տալիս լուծումներ,
- հետևում էր ժամանակացույցին:

Վերլուծելով ստացված տվյալները՝ կարելի է փաստել, որ հիմնականում համակարգողներն իրենց պարտականությունները պատշաճ կերպով են իրականացրել: Այդ մասին են վկայում հարցերի տրված բացառապես դրական պատասխանները: Որոշ առումներով թերացումներ եղել են ժամանակացույցի պահպանման հետ:















Հետազոտության մասնակիցներին խնդրել էինք գնահատել նաև **համակարգողի** որոշ **հմտություններ**, որոնք հանդիսանում են նախապայման փորձագիտական խմբում արդյունավետ աշխատելու և գործընթացները համակարգելու համար: Ինչպես օրինակ՝

- Հաղորդակցվելու հմտությունը,
- Կառավարչական հմտությունները,
- Կազմակերպչական հմտությունները,
- Թիմային աշխատանքի կարողությունը,
- Համբերատարությունը:
















Հղվելով ստացված տվյալների վրա՝ կարելի է ասել, որ համակարգողները արդյունավետ աշխատել են թիմում՝դրսևորելով հաղորդակցվելու, կառավարչական, կազմակերպչական և թիմային աշխատանքի հմտություններ, և հանդես եկել համբերատարությամբ: Միջազգային փորձագետների պնդմամբ, համակարողները կարողացել են համապատասխանաբար արձագանքել չնախատեսված իրավիճակներում, օգնել են փորձագետներին չափանիշ/չափորոշիչների մեկնաբանման հարցում:

# ՄԱՍ 4. ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅՈՒՆ (ԱՐՏԱՔԻՆ ԳՆԱՀԱՏՈՒՄ)

Փորձաքննությունն իրականացվում է ՄՈՒՀ-երի, նրանց ենթակառույցների, գործընթացների, առանձին կրթական ծրագրերի արտաքին գնահատման և ՈԱԱԿ-ի հավատարմագրման հանձնաժողովին ներկայացնելու համար փորձագիտական զեկույց պատրաստելու նպատակով: Փորձաքննությունն իրականացվում է 4 հիմնական քայլերով՝

1. փաստաթղթերի նախնական ուսումնասիրություն (նախնական գնահատում),
2. փորձագիտական այց,
3. փորձագիտական զեկույցի պատրաստում,
4. որոշման կայացում:

Հետազոտության շրջանակներում ևս անդրադարձել ենք վերոնշյալ կետերին՝ փորձելով գնահատել յուրաքանչյուր գործընթացի արդյունավետությունը և վերհանել հանդիպող խնդիրները:

## 4.1. ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՆԱԽՆԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ (ՆԱԽՆԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՈՒՄ)

Նախնական գնահատման փուլում փորձագետներն իրականացրել են ՄՈՒՀ-ի ինստիտուցիոնալ կարողությունների և կրթական ծրագրերի ինքնավերլուծությունների և ներկայացված փաստաթղթերի հավատարմագրման չափանիշներին և պետական կրթական չափորոշիչներին համապատասխանության գնահատում՝ արդյունավետության և գործունակության տեսանկյունից: Հետազոտության շրջանակում անդրադարձել ենք վերոնշյալին, և փորձել ուսումնասիրել նախնական գնահատման գործընթացի արդյունավետությունը:

**Նախնական գնահատման գործընթացի արդյունավետությունը** դիտարկել ենք ըստ հետևյալ խնդիրների՝

— Մուհի վերաբերյալ ընդհանուր պատկերացում կազմել,
— Հիմնախնդիրներ/հարցեր դուրս բերել փորձագիտական այցի ընթացքում պարզաբանելու նպատակով,
— Փորձագիտական զեկույց պատրաստել:










Հիմք ընդունելով ստացված տվյալները՝ կարելի է փաստել, որ նախնական գնահատման գործընթացը տարբեր փորձագիտական խմբերում արդյունավետ է եղել. ծառայել է իր նպատակին, փորձագետները կարողացել են ՄՈՒՀ-ի վերաբերյալ ընդհանուր պատկերացում կազմել, գնահատել ՄՈՒՀ-ի ուժեղ և թույլ կողմերը: Արդյունավետ կերպով դուրս են բերվել հիմնախնդիրները/հարցերը, որոնք բավարար կերպով ներկայացված չեն եղել, խնդրահարույց են եղել և ենթակա են եղել ուսումնասիրման փորձագիտական այցի ընթացքում: Փորձագետների պնդմամբ վերջինս շատ օգտակար է եղել նաև փորձագիտական այցերն արդյունավետ կազմակերպելու, ինչպես նաև զեկույց պատրաստելու տեսանկյունից: Որպես դիտարկում ներկայացրել են, որ նախնական գնահատման գործընթացի արդյունավետությունը մեծապես

կախված է նաև ինքնավերլուծության զեկույցի որակից և ամբողջականությունից: Նախնական գնահատման գործընթացն անհրաժեշտ փուլ են համարում, առանց որի հնարավոր չէր լինի փորձագիտական այցի նախապատրաստվելն ու զեկույցի պատրաստումը:
Գործընթացների համակարգողների պնդմամբ ևս, նախնական գնահատումն արդյունավետ է եղել (100%):

Նախնական գնահատման գործընթացն առավել համակարգված և կանոնակարգված իրականացնելու նպատակով, փորձագետներին տրամադրվել են **ուղենիշեր, ձևաչափեր, որոնց արդյունավետությանն ու կիրառելիությանն** անդրադարձել ենք նաև այս հետազոտության շրջանակներում:

Համակարգողների պնդմամբ ձևաչափը արդյունավետ է եղել, հիմնականում կիրառելի, թիրախավորված և հարմար ՄՈՒՀ-ի վերաբերյալ պատկերը վերհանելու տեսանկյունից: Հիմնականում փոփոխությունների կամ վերանայման կարիք չեն տեսնում: Այդուհանդերձ, որոշ փորձագետներ կարծում են, որ վերջինս ինչ-որ առումով ծավալուն է և պարզեցման կարիք ունի: Առաջարկում են նաև նախնական գնահատմանը հատկացված ժամանակն ավելացնել:

| Բավարարվածություն նախնական գնահատման ձևաչափով | Պատասխանների հաճախականությունը |
|---|---|
| Ավելի շուտ բավարարված չեմ | 1 |
| Ավելի շուտ բավարարված եմ | 22 |
| Լիովին բավարարված եմ | 42 |
| **Ընդամենը** | **65** |




Հարկ է նշել, որ, չնայած, համակարգողները փորձել են հստակեցնել և պարզաբանել ձևաչափի տրամաբանությունը, որոշ փորձագետներ առաջարկում են ձևաչափը փոխկապակցել վերջնական փորձագիտական զեկույցի ձևաչափի հետ, մասնավորապես՝ փորձագիտական զեկույցի կազմումն սկսել նախնական գնահատման փուլում, իսկ այցից հետո ճշգրտել:

Գործընթացի արդյունավետությունից և ձևաչափերի հարմարավետությունից զատ, փորձել են պարզել, թե **որքան ժամանակ է պահանջվել փորձագետներից նախնական գնահատում իրականացնելու համար**: Ինչպես ցույց տվեցին ուսումնասիրության արդյունքները, փորձագետների մեծամասնությունը նախնական գնահատման վրա աշխատել են 60-80 ժամ: Չնայած, որ եղել են փորձագետներ, ովքեր գնահատում իրականացրել են 20-40 ժամվա ընթացքում կամ 80-100 ժամ:

| Նախնական գնահատմանը հատկացված ժամանակահատված | Պատասխանների հաճախականությունը |
|---|---|
| 20-40 ժամ | 17 |
| 40-60 ժամ | 16 |
| 60-80 ժամ | 19 |
| 80-100 ժամ | 10 |
| 100- և ավելի | 5 |
| **Ընդամենը** | **67** |

Հարցված բոլոր համակարգողների պնդմամբ հատկացված ժամանակահատվածը/ծանրաբեռնվածությունը, հիմնականում, իրատեսական էր:

## 4.2. ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԱՅՑ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆ

Փորձագիտական այցն արտաքին գնահատման մի մասն է, որի ընթացքում փորձագետները փորձում են պարզել ինքնավերլուծության մեջ նշված փաստերի և տեղեկատվության

հավաստիությունը, ձեռք բերել լրացուցիչ տեղեկատվություն հանդիպումների և հարցումների միջոցով, ուսումնասիրել կրթական գործընթացները և լրացուցիչ փաստաթղթեր, ավելի լավ պատկերացում կազմելու փորձաքննության ենթակա ուսումնական հաստատության գործունեության վերաբերյալ:

Հետազոտության միջոցով փորձել ենք գնահատել՝ որքանով են իրենց առջև դրված նպատակները իրականացվել: Ուսումնասիրել ենք իրականացված **այցերի արդյունավետությունը, հանդիպումների իրականացման ձևաչափի հարմարավետությունն ու օգտակարությունը**՝ տեղեկատվություն ստանալու տեսանկյունից, **առանձին հանդիպումների արդյունավետությունը**, բուհի կողմից **լրացուցիչ տեղեկատվություն տրամադրելու պատրաստակամությունը**: Անդրադարձել ենք նաև **հանդիպումների օպտիմալ տևողությանը**:

| Փորձագիտական այցի արդյունավետություն | Պատասխանների հաճախականությունը |
|---|---|
| Լիովին արդյունավետ էր | 52 |
| Ավելի շուտ արդյունավետ էր | 14 |
| Ավելի շուտ ոչ | 1 |
| **Ընդամենը** | **67** |




Ինչպես տեսնում ենք ներկայացված գծապատկերից, փորձագիտական այցերն ուսումնական հաստատություններ միանգամայն արդյունավետ են եղել: Անհրաժեշտ տեղեկատվություն ստանալու տեսանկյունից՝ ուսումնասիրել ենք **ժամանակացույցով սահմանված առաձին հանդիպումների արդյունավետությունը**, մասնավորապես՝

- հանդիպումները ՄՈՒՀ-ի տարբեր թիրախ խմբերի հետ
- հանդիպումները ՄՈՒՀ-ի տարբեր ստորաբաժանումներում,
- բաց հանդիպումները,
- ռեսուրսների դիտարկումը,
- փաստաթղթերի ուսումնասիրությունը,
- փորձագիտական խմբի փակ հանդիպումները:

**Անհրաժեշտ տեղեկատվության ստացման տեսանկյունից փորձագիտական այցի ձևաչափով նախատեսված հանդիպումների արդյունավետություն:**















ՄՈՒՀ-ի վերաբերյալ ամբողջական պատկեր ստանալու տեսանկյունից՝ նախատեսված բոլոր հանդիպումները, հարցվածների մեծամասնության կարծիքով արդյունավետորեն են անցել: Ըստ էության ՄՈՒՀ-ի իրական պատկերը կարողացել են վերհանել հենց փորձագիտական այցի ժամանակ: Համակարգողների կարծիքով ևս հանդիպումներն արդյունավետ են եղել ՄՈՒՀ-ում առկա հիմնական խնդիրներն ու կարիքները վերհանելու տեսանկյունից (100%): Ավելին, փորձագետները նշում են, որ հանդիպումների հաջորդականությունը ճիշտ էր պլանավորված, իսկ հանդիպումներն անցնում էին համակարգված կերպով, ինչն էլ հնարավոր է դարձրել բոլոր հանդիպումների արդյունքում մեծ ծավալի անհրաժեշտ տեղեկատվության դուրս բերել: Կարծիք է հնչել, որ հանդիպումների արդյունավետությունը մեծապես կախված է նաև հանդիպումը վարողից, վերջինիս պատրաստվածությունից և գործընթացը մոդեռացնելու կարողությունից: Փոքր-ինչ վերապահումներով են անդրադարձել բաց հանդիպումներին և փաստաթղթերի ուսումնասիրման գործընթացին: Փորձագետների կարծիքով բաց հանդիպումներն այնքան էլ արդյունավետ չեն, քանի որ կամ ընդհանրապես ոչ ոք բաց հանդիպումների չի գալիս, կամ եթե նույնիսկ ՄՈՒՀ-ի ներկայացուցիչները ներկայանում են հանդպիպմանը, չեն պահպանում արդեն իսկ հաստատված ընթացակարգը կամ խուսափում են խոսել ՄՈՒՀ-ի խնդիրներից:
Ինչ վերաբերում է փաստաթղթերի ուսումնասիրմանը, փորձագետների կարծիքով վերջինիս հատկացված ժամանակահատվածը պետք է ավելացվի, որպեսզի հնարավոր լինի առավել խորքային խնդիրներ վերհանել և ՄՈՒՀ-ի գործունեության մասին ամբողջական պատկերացում կազմել:
Ըստ ՈԱԱԿ-ի հավատարմագրման ձեռնարկի՝ յուրաքանչյուր փորձագիտական այցի շրջանակներում իրականացվել են փակ հանդիպումներ, որոնք նպատակաուղղված էին ամփոփելու հիմնական արդյունքները, յուրաքանչյուր հարցի վերաբերյալ ձեռք բերելու համընդհանուր ընկալում ու համաձայնություն, սկսելու վերջնական հաշվետվության պատրաստման աշխատանքները: Իրականացված փակ հանդիպումների արդյունավետությունը գնահատելու նպատակով հետազոտության շրջանակներում փորձել ենք պարզել՝ ըստ փորձագետների **ինչ կարևորագույն 3 խնդիրների լուծմանն են նպաստել դրանք և որքանով արդյունավետ են եղել:**
Փակ հանդիպումները հարցվողների զգալի մեծամասնության կարծիքով շատ կարևոր են և արդյունավետ, սակայն, որպես կանոն, բավական երկարատև:
Վերջիններիս նպաստում են մասնավորապես հետևյալ կարևորագույն խնդիրների լուծմանը՝

| Փակ հանդիպումները նպաստեցին հետևյալ խնդիրների լուծմանը |
|---|
| Փորձագիտական այցի պլանավորում |
| Նախնական գնահատման արդյունքների քննարկում և բուհի հիմնական թույլ և ուժեղ կողմերի դուրսբերում |
| Մտագրոհ (յուրաքանչյուր փորձագետ հնարավորություն է ստանում արտահայտել իր կարծիքը և հիմնավորել իր որոշումը), տարբեր տեսակետների և մոտեցումների քննարկում |

| |
|---|
| Գործընթացի հաջորդիվ քայլերի պլանավորում, հստակեցում և վերջնաժամկետների սահմանում |
| Պատասխանատվությունների հստակ բաշխում |
| ՄՈՒՀ-ի վերաբերյալ փաստերի և տեղեկատվության հստակեցում/ տարաձայնությունների պարզաբանում |
| Օրվա ընթացքում վերհանված տեղեկատվության ընդհանրացում, համադրում և վերլուծություն Բաց մնացած խնդիրների հստակեցում |
| Հաջորդ օրը քննարկվող հարցերի հստակեցում, հաջորդ օրվա պլանավորում |
| Ընդհանուր արդյունքների ամփոփում |
| Չափանիշ/չափորոշիչների մեկնաբանում և քննարկում |
| Կոնսեսուսային որոշման կայացում |
| Չափանիշ/չափորոշիչների վերջնական գնահատում |
| Փորձագիտական այցի վերաբերյալ տպավորության քննարկում |
| Ընթացիկ խնդիրների քննարկում և շտկում |
| Փորձագետների ուղղորդում |

Ինչ վերաբերում է ՄՈՒՀ-ի վերաբերյալ անհրաժեշտ տվյալներ վերհանելու տեսանկյունից փորձագիտական **այցի հանդիպումների հարց ու պատասխան ձևաչափին**, այն դիտարկել ենք՝

— արդյունավետության տեսանկյունից,
— վստահելիության տեսանկյունից և
— նպատակահարմարության տեսանկյունից:










Ինչպես տեսնում ենք, փորձագիտական այցի հարց ու պատասխան ձևաչափը հիմնականում արդյունավետ, վստահելի և նպատակահարմար է եղել:

| Փորձագիտական այցի հանդիպումների հարց ու պատասխան ձևաչափը. Ի՞նչը կփոխեիք: | % ըստ տրված պատ. ընդհանուր հաճախականության |
|---|---|
| Ոչինչ չէինք փոխի | 64 |
| Վերապատրաստել փորձագետներին ճիշտ հարցադրումներ կատարելու նպատակով | 18 |
| Հնչող ոչ բոլոր հարցերն են լիարժեք բացահայտում/վերհանում ՄՈՒՀ-ի գործունեության իրական պատկերը | 12 |
| Դժվարանում եմ պատասխանել | 6 |
| **Ընդամենը** | **100** |

Ինչպես տեսնում ենք, փորձագիտական այցի հարց ու պատասխան ձևաչափի փոփոխության անհրաժեշտության չկա: Այդուհանդերձ, կարևորվում է փորձագետների հարցադրումների ձևը: ՄՈՒՀ-երի ներկայացուցիչները կարծում են, որ հավատարմագրումը գործընկերային գնահատում է և մասնագիտական վստահությունը կարևոր բաղադրիչ է: Այդիսկ պատճառով բարոյահոգեբանական մթնոլորտի ապահովումն այս գործընթացում չափազանց կարևոր է:

Փորձագիտական այցի հարց ու պատասխան ձևաչափն անհրաժեշտ տեղեկատվություն ստանալու տեսանկյունից արդյունավետ են համարում նաև համակարգողները (100%):

Կախված փորձաքննության ենթակա ուսումնական հաստատության մեծությունից և առանձնահատկություններից, ինչպես նաև հավատարմագրման տեսակից փորձագիտական այցի տևողությունը սահմանվում է 3-7 օր: Այդուհանդերձ, հետազոտության շրջանակներում ևս անդրադարձել ենք այս խնդրին՝ նպատակ ունենալով պարզել՝ արդյոք առանձին բուհեր կատարած **փորձագիտական այցերի տևողությունը բավարար է եղել բուհի վերաբերյալ ամբողջական տեղեկատվություն ստանալու համար**:

| Փորձագիտական այցի տևողություն | Պատասխանների հաճախականությունը |
|---|---|
| Լիովին բավարար էր | 32 |
| Ավելի շուտ բավարար էր | 31 |
| Ավելի շուտ բավարար չէր | 6 |
| **Ընդամենը** | **69** |




Թե ՄՈՒՀ-երը, թե փորձագետները, թե համակարգողները գտնում են, որ, ընդհանուր առմամբ, փորձագիտական այցի տևողությունը բավարար է եղել ուսումնական հաստատության մասին ամբողջական պատկերացում կազմելու և ՄՈՒՀ-ի ուժեղ և թույլ կողմերը բացահայտելու համար: Այդուհանդերձ ռեսուրսների դիտարկմանը, փաստաթղթերի ուսումնասիրմանն ու փակ քննարկումներին հատկացվող ժամանակահատվածը պետք է ավելացնել:

Բացի այցի ընդհանուր տևողությունից, հետազոտության շրջանակներում անդրադարձել ենք նաև առանձին թիրախ խմբերի հետ տեղի ունեցող հանդիպումներին՝ պարզելու նշված հանդիպումների օպտիմալ տևողությունը հետագայում այցերի ժամանակացույցերը կազմելիս հաշվի առնելու նպատակով: Ստորև ներկայացված աղյուսակում կարելի է տեսնել, որ հետազոտության մասնակիցների մեծամասնության կարծիքով տարբեր թիրախային խմբերի հետ **հանդիպումների անցկացման ամենաօպտիմալ ժամանակահատվածը 45-60 րոպեն** է, կախված հանդիպումների առանձնահատկություններից:

| Փորձագիտական այցի տևողություն | 30 րոպե | 45 րոպե | 60 րոպե | 75 րոպե | 90 րոպե |
|---|---|---|---|---|---|

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| Կառավարման խորհուրդ | 19% | 27% | 41% | 10% | 3% |
| Գիտխորհուրդ | 13% | 34% | 38% | 8% | 7% |
| Ռեկտոր | 19% | 26% | 40% | 9% | 6% |
| Պրոռեկտորներ | 17% | 23% | 36% | 17% | 7% |
| Դեկաններ | 17% | 24% | 38% | 16% | 5% |
| Ամբիոնի Վարիչներ | 16% | 22% | 34% | 19% | 9% |
| Դասախոսներ | 15% | 20% | 32% | 15% | 18% |
| ՈՒսանողներ | 15% | 21% | 32% | 19% | 13% |
| ՈԱ պատասխանատուներ | 16% | 22% | 34% | 17% | 11% |
| Ստորաբաժանումների ղեկավարներ | 17% | 24% | 38% | 18% | 3% |
| Շրջանավարտներ | 18% | 25% | 38% | 8% | 11% |
| Գործատուներ | 18% | 24% | 38% | 11% | 9% |

Փորձագիտական այցերի ընթացքում յուրաքանչյուր հանդիպումից հետո մասնակիցները գնահատում են **հանդիպման արդյունավետությունը՝** ներառյալ փորձագետների դրսևորած վարքագիծը, որոշ մասնագիտական և ընդհանրական հմտություններ, տեղեկատվություն ստանալու կարողությունները: Փորձագիտական այցերի արդյունավետության ամբողջական պատկերը ստանալու նպատակով այդ տվյալները ևս ներառվել են այս հետազոտության մեջ և ներկայացվում են ստորև.

| **Ինստիտուցիոնալ հավատարմագրում** | **Պատասխանները %-ով** | | |
|---|---|---|---|
| | Այո | Ոչ | ԴՊ |
| Հստակորեն ներկայացվեցին հանդիպումը վարելու կանոնները | **97.4** | **2.6** | **-** |
| Հանդիպման մասնակիցներն ազատ էին արտահայտում իրենց կարծիքները | **97.2** | **1.3** | **1.5** |
| Փորձագիտական խումբ արհեստավարժ էր ՄՈՒՀ-ին վերաբերող տեղեկատվությունը վերհանելիս | **80** | **2.5** | **17.5** |
| Փորձագիտական խմբի անդամների հետ հանդիպումը համագործակցային բնույթ ունի | **85** | **7.5** | **7.5** |
| Փորձագիտական խմբի անդամները կարողացան արդյունավետորեն կառավարել հանդիպման ընթացքը | **100** | **-** | **-** |
| Փորձագիտական խումբը հետևողականորեն էր իր կողմից վերհանվող և քննարկվող հարցերի նկատմամբ | **95** | **2.5** | **2.5** |
| Փորձագիտկան խմբի անդամներն ունեին տեղեկատվություն մատուցելու և ստանալու պատշաճ ոճ | **100** | **-** | **-** |
| Հարցադրումները հստակ և հասկանալի էին | **97.5** | **2.5** | **-** |
| Հանդիպման ընթացքում վերհանվեցին բուհում առկա հիմնախնդիրներն ու կարիքները | **87.2** | **-** | **12.8** |
| Փորձագիտական խմբի անդամները դրսևորեցին հաղորդակցվելու և լսելու կարողությունն | **100** | **-** | **-** |
| Փորձագիտական խմբի անդամներո անկողմնակալ էին փաստերի վերհանման և մեկնաբանման հարցում | **85** | **7.5** | **7.5** |

Վերոնշյալ կետերին տրված առավելապես դրական պատասխանները փաստում են, որ փորձագիտական այցի առանձին հանդիպումները ծառայել են իրենց նպատակին, իսկ փորձագետները կարողացել են վերհանել անհրաժեշտ տեղեկատվությունը օբյեկտիվ

գնահատում իրականացնելու համար: Համեմատաբար ցածր միավորներ ստացվել են ՄՈՒՀ-ին վերաբերող տեղեկատվությունը վերհանելիս փորձագետների արհեստավարժությունը:
Ֆոկուս խմբային հանդիպումների ժամանակ ներկայացվել են որոշ դիտարկումներ փորձագիտական այցերի վերաբերյալ՝

- տեղացի փորձագետներից մեկի ագրեսիվ հարցադրման վերաբերյալ,
- ՄՈՒՀ-երի ներկայացուցիչների կողմից մասնագիտական լեզվի/տերմինաբանության թերի ընկալման վերաբերյալ,
- թարգմանության և հաղորդակցության լեզվի հետ կապված խնդիրների վերաբերյալ,
- փաստաթղթերի ուսումնասիրության գործընթացի առաջացրած դժվարությունների վերաբերյալ:

Համակարգողների կարծիքով հանդիպումները մեծամասամբ ընթացել են համագործակցային մթնոլորտում (100%), իսկ փորձագիտական խմբի անդամները կարողացել են արդյունավետորեն կառավարել հանդիպումների ընթացքը (100%):
Հետազոտության շրջանակում ուսումնասիրել ենք նաև **լրացուցիչ տեղեկատվություն տրամադրելու ՄՈՒՀ-ի պատրաստակամությունը** և վերջինիս կողմից տրամադրվող աշխատանքային պայմանները:
Փորձագետների պնդմամբ ՄՈՒՀ-երը, ընդհանուր առմամբ, պատրաստակամ են եղել լրացուցիչ տեղեկատվություն տրամադրել:

| Բավարարվածություն ՄՈՒՀ-ի լրացուցիչ տեղեկատվ. տրամադրելու պատրաստակամությամբ | Պատասխանների հաճախականությունը |
|---|---|
| Լիովին բավարարված եմ | 33 |
| Ավելի շուտ բավարարված եմ | 29 |
| Ավելի շուտ բավարարված չեմ | 4 |
| Ընդհանրապես բավարարված չեմ | 2 |
| **Ընդամենը** | **68** |




Մինչդեռ համակարգողների կարծիքով տեղեկատվության տրամադրման և ստացման գործընթացի վերաբերյալ պատկերն ուսումնական հաստատությունից ուսումնական հաստատություն տարբերվել է. որոշ ՄՈՒՀ-երում անմիջապես տրամադրվել է անհրաժեշտ տեղեկատվությունը, որոշ ՄՈՒՀ-ում կամ տեղեկատվությունը տրամադրվել է ուշացումով կամ ՄՈՒՀ-ը հրաժարվել է տրամադրել հավելյալ տեղեկատվություն/փաստաթուղթ: Ի պատասխան ուսումնական հաստատությունները նշել են, որ պահանջվող փաստաթղթերը շատ են և ամբողջը հավաքելը ժամանակատար է: Առաջարկում են, որ վերջին 5 տարվա փոխարեն պահանջվեն վերջին 3 տարվա փաստաթղթերը:
Ուսումնական հաստատության կողմից տրամադրվող **աշխատանքային պայմանները** դիտարկել ենք հետևյալ տեսանկյունից՝

— աշխատանքային տարածք,
— հանդիպումների սենյակ,
— տեխնիկական միջոցներ,
— տրանսպորտային միջոցներ,
— ընդմիջումների կազմակերպում:

Ստորև ներկայացված գծապատկերներում կարելի է տեսնել, որ բուհի կողմից տրամադրված ռեսուրսները հիմնականում բավարար են եղել՝ փորձագիտական այցերն արդյունավետ անցկացնելու և անհրաժեշտ տեղեկատվությունը վերհանելու առումով:
















Քանի որ երկրում համաճարակային դրությամբ պայմանավորված, 2020թ.-ի որոշ հավատարմագրման գործընթացների փորձագիտական այցեր կազմակերպվել են առցանց տարբերակով, ուստի հետազոտության շրջանակներում չէինք կարող չանդրադառնալ վերջինիս արդյունավետությանը: Նշենք, որ ՄՈՒՀ-երի ներկայացուցիչները համարում են, որ գործընթացն ունի իր դրական և բացասական կողմերը: Դրականն այն է, որ ծախսատարության տեսանկյունից ավելի հարմար է, սակայն վերջիններիս պնդմամբ հնարավոր չէ խուսափել տեխնիկական խնդիրներից և անհնար է ուսումնական հաստատությունն ամբողջական ներկայացնել: Փորձագետները կարծում են, որ առցանց տարբերակով դժվար է ուսումնական հաստատության մասին ամբողջական պատկեր կազմել: Չնայած ռեսուրսները տեսանկարահանվում և տրամադրվում են, այդուհանդեձ, անհնար է գնահատել, օրինակ՝ լաբորատորիաների նյութերով հագեցվածությունը, կամ սարքավորումների կիրառելիությունը, մաշվածությունը: Կամ լսարանների տեխնիկական հագեցվածության հասանելիությունը: Ինչպես նաև շահակիցների հետ դեմ առ դեմ հանդիպումները վերջիններիս ավելի անկաշկանդ են դարձնում: Ինչպես նաև ֆոկուս խմբային քննարկումների ժամանակ կարծիք հնչեց, որ առցանց հանդիպումների ժամանակ գործընթացը դժվար է վերահսկել, հաճախ մասնակիցները կաշկանդված են, կամ, միգուցե, վերադասները ներկա են հանդիպմանը, որը սահմանափակում է ազատ արտահայտվելու հնարավորությունը:

## 4.3. ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԶԵԿՈՒՅՑԻ ՊԱՏՐԱՍՏՈՒՄ

Ուսումնական հաստատություններ փորձագիտական այցերից հետո փորձագիտական խմբի ղեկավարները ՈԱԱԿ համակարգողների աջակցությամբ պատրաստել են փորձագիտական

զեկույցները՝ հիմնվելով ինքնավերլուծության, փաստաթղթերի ուսումնասիրության և փորձագիտական այցի ընթացքում վերհանված փաստերի վրա: Հիմնվելով փաստերի վրա, իրականացվել են չափորոշիչների խորը վերլուծություններ, ըստ համապատասխան ձևաչափի, որի կիրառելիությանը ու արդյունավետությանը ևս անդրադարձել են հետազոտության շրջանակներում:

| Բավարարվածություն փորձագիտ. զեկույցի ձևաչափով | Պատասխանների հաճախականությունը |
|---|---|
| Լիովին բավարարված եմ | 39 |
| Ավելի շուտ բավարարված եմ | 25 |
| Ավելի շուտ բավարարված չեմ | 3 |
| Ընդհանրապես բավարարված չեմ | 2 |
| **Ընդամենը** | **69** |




Ի մի բերելով հետազոտության արդյունքները՝ կարելի է ասել, որ փորձագետների ճնշող մեծամասնությունը ՈԱԱԿ-ի կողմից տրամադրվող **փորձագիտական զեկույցի ձևաչափով բավարարված են**: Որպես զեկույցի բարելավման միջոցներ առաջարկել են հետևյալ փոփոխությունները:

| Փորձագիտական զեկույցի ձևաչափում ի՞նչ կփոխեիք | Պատասխանների հաճախականությունը |
|---|---|
| Ձևաչափում չափանիշ/չափանիշները պարզեցնել | 10 |
| Զեկույցը գրել ըստ չափանիշների | 2 |
| Միջազգային փորձագետի կողմից ներկայացվող զեկույցի պահանջները հստակեցնել | 1 |
| Ձևաչափում պահանջները հստակ և հակիրճ շարադրել | 2 |
| Ձևաչափը փոփոխման կարիք չունի | 9 |
| **Ընդամենը** | **24** |

Փորձագիտական զեկույցի ձևաչափից զատ անդրադարձել ենք զեկույցը պատրաստելու համար նախատեսված ժամանակահատվածին: Փորձել ենք պարզել՝ **որքան ժամանակ են ծախսել փորձագետները զեկույցը պատրաստելու համար:**

| Փորձագիտական զեկույցին հատկացված ժամանակ | Պատասխանների հաճախականությունը |
|---|---|
| 20-40 ժամ | 8 |
| 40-60 ժամ | 22 |
| 60-80 ժամ | 16 |
| 80-100 ժամ | 13 |
| 100 և ավելի ժամ | 10 |
| **Ընդամենը** | **69** |




Հիմնվելով ստացված արդյունքների վրա՝ կարելի է ասել, որ հարցվածների մեծ մասը զեկույցի վրա աշխատել են 60-80 ժամ, 14%-ի դեպքում 100-ից ավել ժամ է ծախսվել և միայն 12%-ն է կարողացել 20-40 ժամում զեկույցը վերջացնել:

Փորձագիտական զեկույցի կառուցվածքային տարրերի գնահատումից զատ, անդրադարձել ենք զեկույցի բովանդակային խնդիրներին՝

- որքանով էր փորձագիտական զեկույցի լեզուն մատչելի,
- որքանով էր փորձագիտական զեկույցը փոխկապակցված ՄՈՒՀ-ի ինքնավերլուծության հետ,
- որքանով էր փորձագիտական զեկույցն արտացոլում ՄՈՒՀ-ի միջավայրի ընկալումը,
- որքանով փորձագիտական զեկույցը հաշվի է առնում ՄՈՒՀ-ի պատմությունը և զարգացման հետագա ուղղությունները,
- որքանով փորձագիտական զեկույցն արտացոլում է ՄՈՒՀ-ի ռազմավարությունը,
- որքանով է փորձագիտականզեկույցում ճիշտ վերհանված ՄՈՒՀ-ի ուժեղ կողմերը,
- որքանով է ՄՈՒՀ-ն ընդունում զեկույցում նշված թույլ կողմերը,
- որքանով զեկույցը կարող է ազդեցություն ունենալ ՄՈՒՀ-ի նոր ռազմավարության վրա,
- որքանով զեկույցը կարող է ազդեցություն ունենալ ՄՈՒՀ-ի վարչարարության և կառավարման վրա,
- որքանով զեկույցը ՄՈՒՀ-ի համար նոր վերլուծական հնարավորություններ կարող է ընձեռնել:

| | Լիովին համաձայն եմ | Ավելի շուտ համաձայն եմ | Ավելի շուտ համաձայն չեմ | Ընդհանրապես համաձայն չեմ | ԴՊ |
|---|---|---|---|---|---|
| փորձագիտական զեկույցի լեզուն մատչելի | 47% | 21% | 32% | - | - |
| փորձագիտական զեկույցը փոխկապակցված ՄՈՒՀ-ի ինքնավերլուծության հետ, | 58% | 37% | 5% | - | - |
| փորձագիտական զեկույցն արտացոլում է ՄՈՒՀ-ի միջավայրի ընկալումը, | 37% | 26% | 37% | - | - |
| փորձագիտական զեկույցը հաշվի է առնում ՄՈՒՀ-ի պատմությունը և զարգացման ուղղությունները | 53% | 26% | 21% | - | - |
| փորձագիտական զեկույցն արտացոլում է ՄՈՒՀ-ի ռազմավարությունը | 38% | 33% | 29% | - | - |
| փորձագիտական զեկույցում ճիշտ վերհանված են ՄՈՒՀ-ի ուժեղ կողմերը | 58% | 37% | 5% | - | - |
| ՄՈՒՀ-ն ընդունում է զեկույցում նշված թույլ կողմերը | 37% | 31% | 32% | - | - |
| փորձագիտական զեկույցը կարող է ազդեցություն ունենալ ՄՈՒՀ-ի նոր ռազմավարության վրա,- | 45% | 35% | 10% | 10% | - |
| փորձագիտական զեկույցը կարող է ազդեցություն ունենալ ՄՈՒՀ-ի վարչարարության և կառավարման վրա | 50% | 44% | 6% | - | - |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| փորձագիտական զեկույցը ՄՈՒՀ-ի համար նոր վերլուծական հնարավորություններ կարող է ընձեռնել | 53% | 26% | 10% | 11% | - |

Հիմք ընդունելով ՄՈՒՀ-երի շրջանում իրականացված հետազոտության արդյունքները՝ կարելի է ասել, որ փորձագիտական զեկույցն, ընդհանուր առմամբ, ծառայել է իր նպատակին. **մասնավորապես զեկույցը կարող է ազդեցություն ունենալ ՄՈՒՀ-ի նոր ռազմավարության ընտրության վրա և ՄՈՒՀ-ի ընդհանուր վարչարարության և կառավարման վրա, ինչպես նաև նոր վերլուծական հնարավորություններ կարող է ընձեռել,**: Այնուամենայնիվ, արդյունքները հիմք են տալիս պնդելու, որ զեկույցի լեզուն այնքան էլ մատչելի չի եղել, փորձագիտական եզրակացություններում դեռևս ձևակերպումների տարընթերցումների խնդիր կա: Ինչպես նաև միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների մասնակիցների կածիքով ոչ միշտ են զեկույցներն արտացոլում ուսումնական հաստատության իրական վիճակը, ՄՈՒՀ-ի գործունեության ողջ շրջանակը: Ուսումնական հաստատության որոշ ներկայացուցիչներ նշում են, որ զեկույցը կարդալիս տպավորություն է եղել, կարծես, այլ ուսումնական հաստատության մասին է խոսքը:

Ինչպես հարցումների, այնպես էլ ֆոկուս խմբային քննարկումների ժամանակ հետազոտության մասնակիցները նշել են, որ զեկույցում նշված թերությունները հիմք են հանդիսացել հետագա գործունեության պլանավորման համար և կարող է ՄՈՒՀ-ի համար արդյունավետ ուղենիշ դառնալ երկարաժամկետ զարգացման հեռանկարների հստակեցման տեսանկյունից:

| Փորձագիտական զեկույցը | Պատասխանների հաճախականությունը |
|---|---|
| Զեկույցում նշված թերությունները հիմք են հանդիսանում հետագա գործունեության պլանավորման և զարգացման համար | 9 |
| Զեկույցը արտացոլում է ՄՈՒՀ-ի իրական թույլ և ուժեղ կողմերը | 2 |
| Փորձագիտական զեկույցն արտացոլում է ՄՈՒՀ-ի իրական պատկերը և կնպաստի ՄՈՒՀ-ում իրականացվող գործընթացների որակի շարունակական բարելավմանը | 4 |
| Զեկույցը ոչ միշտ է արտացոլում ուսումնական հաստատության իրական վիճակը | 2 |
| Որոշ դեպքերում փորձագիտական զեկույցում նշված թերությունները իրականությունից կտրված են | 1 |
| Զեկույցի լեզուն մատչելի չէր. ձևակերպումները հստակեցման կարիք ունեն | 3 |
| Խորհրդատվությունները ոչ միշտ են արժեքավոր | 1 |
| **Ընդամենը** | **22** |

Ոչ պակաս կարևորություն ունեն փորձագիտական զեկույցներում ներկայացված խորհրդատվությունները. դրքանով են վերջիններս **օգտակար, հասկանալի և իրատեսական իրականացման տեսանկյունից:**










Հիմնվելով ստացված տվյալների վրա՝ կարելի է ասել, որ խորհրդատվությունները հասկանալի և շատ օգտակար են եղել ՄՈՒՀ-ի հետագա զարգացման և ապագայում ճիշտ կողմնորոշվելու տեսանկյունից: Իսկ զեկույցներում նշված դիտարկումները հետագայում դարձել են ՄՈՒՀ-ի բարելավման պլանի առանցքային կետեր: Իրականացման իրատեսականության դեպքում որոշ տարակարծություններ կան՝ հարցվածների 15%-ը (հիմնականում միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների ներկայացուցիչները) գտնում է, որ իրականացումը մասամբ իրատեսական չէ, քանի որ այն պայմանավորված է ՄՈՒՀ-ի ընթացիկ գործունեության վրա ազդող արտաքին և ներքին գործոնների ազդեցությունով ևս: Միևնույն ժամանակ նշվում է, որ խորհրատվությունները հաճախ շատ լայն են և դժվար է հասկանալ՝ ինչ պետք է անել:

Ըստ հավատարմագրման կարգի ուսումնական հաստատությունը պետք է ներկայացնի դիտողություններ յուրաքանչյուր չափանիշի գնահատականի և նախնական զեկույցի վերաբերյալ: Բուհի արձագանքի հիման վրա փորձագիտական խմբի ղեկավարը ՈԱԱԿ-ի համակարգողի հետ խմբի անդամների հետ համաձայնեցնելուց և քննարկելուց հետո կամ վերանայում են զեկույցը, դիտողությունների հիմնավորված լինելու դեպքում, կամ ՄՈՒՀ-ի ներկայացուցիչների և փորձագետների մասնակցությամբ կազմակերպվում է համատեղ քննարկում՝ ներկայացված դիտողություններն ու առաջարկությունները հիմնավորելու նպատակով: Հանդիպման ընթացքում թե փորձագետները, թե ՄՈՒՀ-երի ներկայացուցիչները ներկայացնում են իրենց հիմնավորումները/տեսակետները, որից հետո կայացվում է կոնսեսուսային որոշում՝ ընդունել հիմնավորումը և համապատասխան փոփոխություն կատարել զեկույցում կամ ոչ: Հանդիպման արդյունավետությունը քննարկել են հարցված շահակիցների հետ:

| Փորձագիտական խմբի և ՄՈՒՀ-ի ներկայացուցիչների հանդիպման արդյունավետությունը | Պատասխանների հաճախականությունը |
|---|---|
| Լիովին արդյունավետ էր | 7 |
| Ավելի շուտ արդյունավետ էր | 5 |
| Ոչ ավելի շուտ արդյունավետ չէր | 7 |
| Ընդհանրապես արդյունավետ չէր | 1 |
| **Ընդամենը** | **20** |




Հարցվածների 58%-ն է կարծում, որ հանդիպումը արդյունավետ է:

Փորձել ենք նաև պարզել՝**որքանով են փորձագիտական խմբերը հաշվի առել բուհի կողմից ներկայացված զեկույցի վերաբերյալ դիտողությունները:**

| Փորձագիտական զեկույցի վերաբերյալ ՄՈՒՀ-ի դիտողություններ | Պատասխանների հաճախականությունը | |
|---|---|---|

| | |
|---|---|
| Այո | 8 |
| Մասամբ այո | 4 |
| Ոչ | 8 |
| **Ընդամենը** | **20** |




Ինչպես տեսնում ենք, հարցվածների կարծիքները հավասարապես բաշխվել են: Հիմնավորումները հակասական են: Ոմանք նշում են, որ առարկություններ չեն ներկայացրել: Ոմանք նշում են, որ առարկություններն ընդունվել են և զեկույցում համապատասխանաբար վերանայվել: Ոմանք նշում են, որ առարկությունների մի մասն ընդունվել է, մյուս մասը՝ ոչ, հիմքերի ոչ հստակ լինելու պատճառով, կամ եթե նույնիսկ հաշվի չեն առնվել, բավարարված են փորձագիտական խմբի հիմնավորումներով: Մեկ մասնակից նույնիսկ առաջարկում է, որպեսզի փորձագիտական խումբը գրավոր հիմնավորում ներկայացնի, եթե առարկությունները չեն ընդունվում:

| Փորձագիտական խումբը հաշվի է առել փորձագիտական զեկույցի վերաբերյալ Ձեր դիտողությունները.<br>Խնդրում ենք մասնավորեցնել: | Պատասխանների հաճախականությունը |
|---|---|
| Հանգամանորեն քննարկվել է դիտարկումներն ու առաջարկությունները, հաշվի են առնվել ՄՈՒՀ-ի առանձնահատկությունները և զեկույցում համապատասխան փոփոխություններ կատարվել | 6 |
| Իրավիճակների/փաստերի նկատմամբ ՄՈՒՀ-ի և փորձագետների ընկալումները/մոտեցումները տարբեր են<br>Առարկությունները հաշվի չի առնվել | 6 |
| Դիտարկումները հաշվի են առնվել, սակայն արդյունքում գնահատական չի փոփոխվել | 2 |
| Ուսումնական հաստատությունը առարկություններ չի ներկայացրել | 6 |
| **Ընդամենը** | **20** |

Հարցվողներին խնդրել էին նշել՝ **ինչը կփոխեին փորձագիտական զեկույցում նշված թերությունների վերացման բուհի ծրագրի ներկայացման ձևաչափում:** ՄՈՒՀ-երի ճնշող մեծամասնությունը (18 մասնակից) գտնում է, որ վերջինս վերանայման անհրաժեշտություն չունի: Միայն ֆոկուս խմբային քննարկման ժամանակ հնչեց, որ նախորդ ձևաչափն ավելի պարզ և մատչելի էր: Եվ առաջարկեցին ձևաչափում «Տրամադրվող բյուջե» -ն փոխարինել «ֆինանսավորման աղբյուրը և կանխատեսվող չափը» բառերով:

Հաշվի առնելով, որ գործընթացի արդյունավետությունից է կախված որոշումների կայացումը, հետազոտության շրջանակներում ուսումնասիրել ենք նաև հավատարմագրման հանձնաժողովի անդամների կարծիքը: Հանձնաժողովի անդամների պնդմամբ փորձագիտական գնահատումներն իրականացվել են ՈԱԱԿ-ի մեթոդաբանության և հավատարմագրման ձեռնարկի համաձայն (100%), փորձագիտական զեկույցների բոլոր մասերը տրամադրում են բավարար, պարզ և հավաստի տեղեկատվություն (100%), որևէ անհամապատասխանություն չկա հանձնաժողովի եզրակացության և զեկույցում բերված ապացույցների միջև(100%):

# ՄԱՍ 5. ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ՅՈՒՐԱՔԱՆՉՅՈՒՐ ԳՈՐԾԸՆԹԱՑԻՆ ՀԱՏԿԱՑՎԱԾ ԺԱՄԿԵՏՆԵՐԻ ԻՐԱՏԵՍԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Հավատարմագրման գործընթացի վերաբերյալ առավելագույնս ամբողջական պատկեր ստանալու նպատակով անդրադարձել ենք նաև յուրաքանչյուր գործընթացին հատկացված ժամկետների իրատեսականությանը: Փորձել ենք պարզել՝որքանով են հատկացված ժամկետները բավարար եղել, որն է առավել իրատեսական ժամանակահատվածը:
Մասնավորապես դիտարկվել են՝

- Ինքնավերլուծության իրականացմանը հատկացված ժամանակահատվածը,
- Նախնական այցից հետո փորձագիտական այցին նախապատրաստվելու համար բուհին տրամադրված ժամանակահատվածը,
- Փորձագիտական այցի տևողությունը,
- Փորձագիտական զեկույցի պատրաստման տևողությունը,
- Բարելավման պլանի մշակմանը հատկացված ժամանակահատվածը,
- Զեկույցի նախնական տարբերակի վերաբերյալ դիտողություններ կամ առարկություններ ներկայացնելու ժամանակահատվածը:

| Հավատարմագրման գործընթացի ժամկետների իրատեսականություն | Լիովին բավարար էր | Ավելի շուտ բավարար էր | Ավելի շուտ բավարար չէր | Ընդհանրապես բավարար չէր | ԴՊ |
|---|---|---|---|---|---|
| Ինքնվերլուծության իրականացմանը հատկացված ժամանակահատված | 32% | 47% | 21% | - | - |
| Նախնական այցից հետո փորձագիտական այցին նախապատրաստվելու համար ՄՈՒՀ-ին տրամադրված ժամանակահատված | 63% | 21% | 11% | 5% | - |
| Փորձագիտական այցի տևողություն | 53% | 42% | - | 5% | - |
| Զեկույցի պատրաստմանը հատկացված ժամանակահատված | 17% | 33% | 50% | - | - |
| Զեկույցի վերաբերյալ դիտողություններ ներկայացնելու ժամանակահատված | 53% | 31% | 16% | | - |
| Բարելավման նախնական պլանի մշակմանը հատկացված ժամանակահատված | 37% | 31% | 16% | 16% | - |

Ինչպես տեսնում ենք աղյուսյակում, հավատարմագրման ժամանակացույցի հատկացված ժամկետներն, ընդհանուր առմամբ, բավարար են եղել գործընթացն արդյունավետ կազմակերպելու համար, իսկ մասնակիցները, հիմնականում, փոփոխության անհրաժեշտություն չեն տեսնում: Միայն վերապահումներ են ներկայացվել **ինքնավերլուծության զեկույցի և փորձագիտական զեկույցի պատրաստմանը հատկացված ժամանակահատվածների վերաբերյալ**:

Բուհերը կարծում են, որ **ինքնավերլուծության զեկույցի պատրաստմանը հատկացված ժամանակը միանգամայն** բավարար էր և օպտիմալ, մինչդեռ միջին մասնագիտական ուսումնական հաստատություններն առաջարկել են առաջին անգամ գործընթաց անցնող ուսումնական հաստատությունների համար փոքր-ինչ երկարաձգել հատկացվող ժամանակահատվածը:

Թե փորձագետների, թե համակարգողների պնդմամբ **փորձագիտական զեկույցի պատրաստմանը** հատկացված ժամանակահատվածը, ինչ-որ առումով, բավարար չի եղել: Ժամանակացույցից չշեղվելու համար, փորձագետները ստիպված են եղել գերծանրաբեռնված աշխատել: Ուստի առաջարկում են զեկույցների պատրաստման ժամանակահատվածը երկարաձգել նվազագույնը 2 շաբաթով:

Քանի որ որոշ ուսումնական հաստատություններ անցնում էին վերահավատարմագրման գործընթացներ, հետազոտության շրջանակներում փորձեցինք պարզել, թե ինչպիսի **մարտահրավերների են հանդիպել երկրորդ շրջափուլի ժամանակ:**

| Ինչպիսի՞ մարտահրավերների հանդիպեցիք երկրորդ շրջափուլի ժամանակ | Պատասխանների հաճախականությունը |
|---|---|
| Մարտահրավերներ չեն եղել | 3 |
| Ֆորս-մաժորային իրավիճակներ՝ Covid-19, պատերազմ | 3 |
| ՄՈՒՀ-երում հաճախ ներքին շահակիցները հավատարմագրումը դիտարկում են որպես ստուգման գործիք, ոչ թե բարելավման | 2 |
| **Ընդամենը** | **8** |

# ԱՄՓՈՓՈՒՄ

Առաջնային կարևորություն տալով հավատարմագրման գործընթացի շարունակական բարելավմանը՝ իրականացված հավատարմագրման գործընթացի արդյունավետության ուսումնասիրությունը հնարավորություն տվեց վերհանել լավագույն փորձը, բացահայտել գործընթացի խնդիրներն և հիմք ապահովել փաստաթղթային հենքի ու գործընթացի բարելավման համար:

Հետազոտության միջոցով ուսումնասիրվել է՝

- որքանով է ՄՈՒՀ-երի հավատարմագրումն իրականացվել հիմնավորված, անկախ և անկողմնակալ
  - փորձագիտական զեկույցներն ըստ շահակիցների հուսալի են և հիմնավորված
  - հավատարմագրման գործընթացները եղել են թափանցիկ և հստակ
  - փորձագետները անկախ են եղել գնահատման, որոշման կայացման գործընթացներում և առհասարակ գործելաոճում
- որքանով են հավատարմագրման արդյունքներն ընդունելի ՀՀ մասնագիտական կրթական համակարգի և միջազգային փորձագետների կողմից
- որքանով են կանոնակարգերում, ՈԱԱԿ ընթացակարգերում և ձևաչափերում կատարված փոփոխությունները փոխկապակցված և հաշվի առնում գործընթացի ընթացքում առաջացող խնդիրներն և խոչընդոտները
- որքանով է գործընթացն իրականանում Հավատարմագրման կարգի և սահմանված ժամանակացույցներին համապատասխան
  - շահակիցները բավարարված են աշխատանքային ծանրաբեռնվածությունից և ՈԱԱԿ ձևաչափերից:

Հավատարմագրման գործընթաց անցած ՄՈՒՀ-երի (բուհ՝ 9, ՄՄՈՒՀ՝ 17), տեղական (56) և միջազգային (13) փորձագետների, համակարգողների (17), ՈԱԱԿ հավատարմագրման հանձնաժողովի կողմից տրամադրված տեղեկատվությունն ընդհանրացվել է, իսկ արդյունքների վերլուծության ամփոփ պատկերը ներկայացվում է ստորև.

**Դիմում-հայտի կառուցվածք և բովանդակություն**

Դիմում-հայտը լրացնելիս խոչընդոտներ չեն եղել: Ձևաչափը պարզ է, ուստի թե՛ կառուցվածքային, թե՛ բովանդակային փոփոխությունների անհրաժեշտություն չկա:

**ՈԱԱԿ էլեկտրոնային հարցաշար**

ՈԱԱԿ-ի էլեկտրոնային հարցաշարը լրացնելը, հիմնականում, հեշտ և անխոչընդոտ է եղել: Ձևաչափի բովանդակային փոփոխության անհրաժեշտություն չկա: Մասնակիցների կողմից հանդիպած խնդիրները, մեծամասամբ, պայմանավորված են եղել ներկայացվող փաստաթղթերի ծավալով, որը երբեմն հանգեցնում էր տեխնիկական խնդիրների: Դիտարկումները վերաբերում են նաև էլեկտրոնային հարցաշարում և այլ փաստաթղթերում ներկայացված տեղեկատվության կրկնությանը: Միևնույն ժամանակ գրեթե բոլոր մասնակիցների կողմից բարձ է գնահատվել ՈԱԱԿ անձնակազմի պատրաստակամությունն ու անկեղծ հոգածությունը խնդիրներն արագ վերացնելու և աջակցելու:

**Ինքնավերլուծություն**

Ինստիտուցիոնալ կարողությունների ***ինքնավերլուծության ձևաչափը*** մեծամասամբ կիրառելի է, օգնում է և ընդգրկում է բոլոր անհրաժեշտ տիրույթները: Ձևաչափի բովանդակությունը լիարժեք հնարավորություն է տալիս ՄՈՒՀ-ին ինքնագնահատում կատարելու և ախտորոշելու ՄՈՒՀ-ի գործունեությունը: Այն ոչ միայն ինքնավերլուծության լավագույն ուղենիշ է, այլև սովորեցնում է համակարգված աշխատելու, աշխատանքի իրականացման փուլերը միմյանցով պայմանավորելու և գնահատման պայմաններ ստեղծելու: Այդուհանդերձ, առաջարկներ են եղել

ձևաչափը պարզեցնելու, տերմինները հստակեցնելու, իսկ հարցադրումները՝ կոնկրետացնելու: Չնայած ինստիտուցիոնալ կարողությունների ինքնավերլուծության ձևաչափը կիրառելի է բոլոր ՄՈՒՀ-երի համար, այդուհանդերձ որոշ ՄՄՈՒՀ-ների համար դժվարություն է առաջացրել ձևաչափը լրացնելը, քանի որ իրենց կարծիքով միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների առանձնահատկությունները հաշվի առնված չեն:

***Չափանիշների և չափորոշիչների*** մեկնաբանության հարցի վերաբերյալ ՄՈՒՀ-երը կարծում են, որ վերջիններիս համար հնարավորինս չափելի պահանջներ պետք է սահմանվեն: Եթե չափանիշների պարագայում կարծում են, որ վերջիններս ուղղորդող են, ապա չափորոշիչների դեպքում առաջարկում են հնարավորինս չափելի և գնահատելի ցուցիչներ սահմանել՝ տարաբնույթ մեկնաբանություններից խուսափելու համար: Չնայած վերջիններս սահմանում են նվազագույն պահանջները, հասկանալի լինելու վերաբերյալ ՄՈՒՀ-երից ոմանք նշել են, որ թյուրըմբռնումներ կան, ձևակերպումներն ու տերմինները հավելյալ հստակեցման և մեկնաբանման անհրաժեշտություն ունեն: Հստակեցումից զատ, որպես առաջարկություն ներկայացվել է չափորոշիչների թվի պակասեցումը կամ որոշ չափորոշիչների միավորումը: Հետազոտության արդյունքները ցույց են տալիս, որ ուղենիշների առկայությունն ուսումնական հաստատությունների ներկայացուցիչները համարում են անհրաժեշտություն: Վերջիններս կհստակեցնեն չափանիշ/չափորոշիչները, հետևաբար կնվազեն նաև տարընթերցումները և հնարավոր կլիներ չափելի ներկայացնել փորձագետների կողմից ակնկալվող հիմնավորումները: Միևնույն ժամանակ, ֆոկուս խմբային քննարկումների ժամանակ նշվեց, որ ուղենիշների մեկնաբանում իրականացվում է ՈԱԱԿ-ի կողմից իրականացվող խորհրդատվությունների և վերապատրաստումների շրջանակներում:

Ինչ վերաբերում է ձևաչափում առկա ***հիմքերին***՝ վերջիններս ավելի շատ ուղղորդող բնույթ ունեն, միևնույն ժամանակ, որոշ դեպքերում կարծիք հնչեց, որ պահանջվող հավելվածները չափազանց շատ են և բավական ժամանակատար:

Փորձագետների շրջանում իրականացված հետազոտության շրջանակներում, ինչպես նաև ֆոկուս խմբային քննարկումների ժամանակ փորձել ենք պարզել՝ հատկապես ինչպիսի խնդիրների առկայության դեպքում ինքնավերլուծությունը պետք է վերադարձնել ՄՈՒՀ-ին՝ վերանայելու և ինքնավերլուծության փաթեթում ինչպիսի հիմնավորող տվյալների (թե քանակական, թե որակական) անհրաժեշտություն են տեսնում փորձագետները՝ փորձաքննության արդյունավետությունը բարձրացնելու նպատակով: Հիմնական խոչընդոտը կապված է **չափանիշ/չափորոշիչների պահանջը սխալ ընկալելու** հետ: Ինքնավերլուծության զեկույցներում հաճախ գերակշռում են նկարագրությունները, զեկույցների վերլուծականությունը շատ քիչ է, մասնավորապես՝

- բացակայում են **խորքային վերլուծությունները** (քանակական և որակական տվյալներ, քանակական տվյալների դինամիկայի վերլուծություն, կրճատման կամ ավելացման պատճառների բացահայտում) տարբեր գործընթացների արդյունավետության վերաբերյալ,
- ոչ միշտ են կիրառվում ՈՆԱ անհաժեշտ **գործիքակազմեր** տարբեր գործընթացների արդյունավետությունը հիմնավորելու նպատակով: Օր՝
    - դասավանդման և ուսումնառության որակի ապահովում,
    - շրջանավարտների զբաղվածություն,
    - կառավարում:

Ինքնավերլուծության զեկույցներում ՄՈՒՀ-երը նշում են, որ իրականացվել են տարաբնույթ հարցումներ, սակայն չի նշվում, թե վերհանված խնդիրների հիման վրա ինչ է իրականացվել կամ ինչպես են այդ արդյունքները հետագայում կիրառվելու կամ կիրառվել, որքանով է վերհանված տեղեկատվությունը հիմք հանդիսացել որոշումների կայացման համար:

Մեծամասամբ բացակայում է որակի բարելավման շրջանակը, որը ակադեմիական ստորաբաժանումներին կխրախուսեր ուսումնասիրել դասավանդման և ուսումնառության, հետազոտության որակը, վերհաներ ռիսկերը, բացահայտել ինչն է լավ աշխատում, ինչը՝ ոչ:
Հաճախ բացակայում է թափանցիկ տեղեկատվությունը ՈՆԱ գործընթացների վերաբերյալ: ՈՆԱ համակարգը ոչ միշտ է փոխկապակցված ռազմավարական պլանավորման և կառավարման հետ:

ՄՈՒՀ-երի վերլուծությունները հիմնականում չեն արտացոլում ՊԻԳԲ շրջափուլը: Ուսումնական հաստատություններում գործընթացները ոչ միշտ են իրականացվում որակի բարելավման ՊԻԳԲ շրջափուլին համապատասխան, իսկ վերլուծություններում ՄՈՒՀ-ը չի ներկայացվում՝ որ փուլում է գտնվում: Որոշ ուսումնական հաստատությունների ինքնավերլուծության զեկույցներում նույնիսկ խախտված է ցանկալիի և իրականի սահմանները (փաստացի իրականացվող գործընթացներ և պլանավորվող գործընթացներ):
Հաճախ զեկույցներում ՄՈՒՀ-երը նշում են, որ մշակվել են քաղաքականություններ, ընթացակարգեր, կանոնակարգերը, իրականացրել են վերանայումներ և բարեփոխումներ, սակայն պարզ չէ՝ ինչու, ինչ կարիքների հիման վրա, արդյո՞ք դա բխել է գործընթացները կանոնակարգելու գաղափարից: Թե որքանով են արդյունավետ այդ քաղաքականությունները, ընթացակարգերն ու կիրառվող գործիքակազմը և ինչ խնդիրներ են վերհանվել կամ առաջացել դրանց վերանայման գործընթացում, չի քննարկվում:

Զեկույցներում առկա SWOT վերլուծությունները հաճախ չեն բխում չափանիշի մակարդակով ներկայացված վերլուծությունից, ուժեղ և թույլ կողմերը հիմնականում հակադրումներ են, հնարավորությունները և խոչընդոտները շատ վերացական են և այդ ամենը միասին հնարավորություն չի ընձեռում հաստատությանն իրականացնել արդյունավետ պլանավորում: Վերլուծված չեն, թե ինչպես օգտագործել հնարավորությունները գործող թույլ կողմերը վերացնելու համար, կամ հակառակը չի երևում, թե ինչպես են նախատեսում կանխել վտանգները, որպեսզի վերջիններս չանդրադառնան առկա ուժեղ կողմերի վրա:
Եվ որպես խնդրի լուծում փորձագետներն առաջարկում են ինքնավերլուծության զեկույցը հետ վերադարձնել բուհերին, եթե գնահատումն արդյունավետ իրականացնելու համար անհրաժեշտ տեղեկատվության մինիմալ շեմն ապահովված չէ:

Հիմնվելով հետազոտության արդյունքների վրա՝ կարելի է փաստել, որ ի տարբերություն նախորդ տարիների, հետազոտությանը մասնակցած փորձագետների ճնշող մեծամասնությունը հավելյալ տվյալների անհրաժեշտություն չի տեսնում: Ավելին, ֆոկուս խմբային քննարկումների ժամանակ, այն փորձագետները, ովքեր ներգրավված են եղել հավատարմագրման գործընթացներում մեկից ավելի անգամներ, նշեցին, որ իրենց դիտողությունների հիման վրա վերանայվել են ՈԱԱԿ-ի էլեկտրոնային հարցաշարն ու ինքնավերլուծության ձևաչափը՝ պահանջվող տեղեկատվությունը դարձնելով ավելի ամբողջական և լիարժեք գնահատում իրականացնելու համար: Այդուհանդերձ հնչեցին կարծիքներ, որ ավելի շատ վերլուծական տվյալների (ոչ թե ուղղակի փաստերի ու թվերի նկարագրություններ) անհրաժեշտություն այնուամենայնիվ կա: Այսինքն, ներկայացված լինի ոչ թե քանակական տվյալ, այլ դրա դինամիկայի վերլուծությունը, կրճատման կամ ավելացման պատճառների բացահայտումը և այլն: Ինչպես նաև կցանկանային տեսնել նախորդ գնահատման արդյունքում մշակված բարելավման ծրագրի կատարողականի գնահատումն ըստ խորհրդատվությունների:

**ՈԱԱԿ-ի կողմից տրամադրված խորհրդատվություն**
Ինքնավերլուծության իրականացման գործընթացում ՈԱԱԿ-ի կողմից տրամադրված խորհրդատվությունը, ընդհանուր առմամբ, ծառայել է իր նպատակին:
**Փորձագիտական խմբի ձևավորում և կազմ**

Փորձագիտական խմբերի ձևավորման գործընթացում առանձնակի կարևորության է արժանացել գործատուների և կրթության կառավարման ոլորտի ներկայացուցիչների ներգրավումը, ովքեր անմիջականորեն առնչվում են ուսումնական գործընթացի կառավարմանը և տիրապետում են ոլորտի առանձնահատկություններին: Իսկ ՊԴ կազմի ներկայացուցչի ներկայությունը ցանկալի է, քանի որ քննարկվում են ՄԿԾ-ները, դրանց բովանդակությունն ու առանձնահատկությունները: Մասնագիտական ոլորտի ներկայացուցչի առկայությունը կարևոր է ՄՈՒՀ-մասնավոր հատված-տնտեսություն փոխգործակցությունն ամրապնդելու և իրական շահերը վերհանելու նպատակով:

Բացի փորձագետների այս կամ այն մասնագիտական ոլորտի պատկանելիությունից, վերջիններիս ընտրության ժամանակ հաշվի են առնվում նաև նրանց գրավոր և բանավոր հաղորդակցվելու, հանդիպումներ անցկացնելու, մեծ ծավալի տեղեկատվություն վերլուծելու կարողությունները, ինչպես նաև անձնային այնպիսի հատկությունները, որոնք թույլ կտան ապահովել անկողմնակալ և օբյեկտիվ գնահատում: Վերոնշյալ հմտությունները գործընթացում կիրառելու, արդյունավետ և նպատակային փորձաքննություն իրականացնելու համար, ՈԱԱԿ-ը պարբերաբար իրականացնում է փորձագիտական խմբի անդամների վերապատրաստումներ: Վերապատրաստումներն, ընդհանուր առմամբ, արդյունավետ են եղել. պարզաբանել են ողջ գործընթացի նպատակը, կարևորությունը՝քայլ առ քայլ ներկայացնելով գործընթացի փուլերը: Ներկայացվել է արտաքին գնահատման իրականացման ողջ մեթոդաբանությունն ու ընթացակարգը, փորձագետի դերը և պարտականությունները, ինչպես նաև գնահատումներն առավել արդյունավետ իրականացնելու ուղիները, որոնք շատ են օգնել փորձագիտական աշխատանքն արդյունավետ կազմակերպելու և իրականացնելու գործում: Ընդհանուր առմամբ, մասնակիցները գտնում են, որ վերապատրաստումները ծառայել են իրենց բուն նպատակին՝ ապահովվել և տրամադրվել է տեղեկատվություն առաջիկա քայլերի մասին, սակայն փորձագետները նշել են, որ կցանկանային, որպեսզի վերջիններս լինեն շարունակական: Որպես առաջարկություն ներկայացրել են նախկինում ի հայտ եկած խնդիրների քննարկումը: Ինչպես նաև, փորձագետները գտնում են, որ վերապատրաստումները պետք է լինեն տարբերակված. արդյունավետ չէ, երբ միևնույն խմբում ներգրավված են և սկսնակ, և փորձառու փորձագետներ: Համակարգողներն իրենց հերթին տեսնում են ՄԿԾ-ների վերլուծության վերաբերյալ վերապատրաստումների իրականացման անհրաժեշտություն, մասնավորապես՝ առկա խնդիրների վերհանում, ուժեղ և թույլ կողմերի դուրսբերում: Որքան էլ տարօրինակ հնչի, բացի նրանից, որ համակարգողներն առաջարկում են փորձագետներին վերապատրաստել զեկույց պատրաստելու և ճիշտ հարցադրումներ կատարելու վերաբերյալ, կարծում են, որ ՄՈՒՀ-երի՝ գործընթացում ներգրավվող մասնակիցներին ևս անհրաժեշտ է վերապատրաստել, թե ինչպես պատասխանել փորձագետների հարցերին:

Փորձագետների ճնշող մեծամասնությունը կարողացել է ձեռքբերված հմտությունները և կարողությունները օգտագործել փորձաքննություն իրականացնելիս: Ավելին, փորձագետների 100%-ը ցանկություն է հայտնել որպես փորձագետ կրկին մասնակցելու հավատարմագրման գործընթացներում:

Համաձայն ստացված արդյունքների, փորձաքննության իրականացման գործընթացները իրականացնելիս փորձագետները գործել են առավելագույնս անկախ: Ինչպես փորձագետներն են փաստում, որևէ խոչընդոտ չի եղել, որը կսահմանափակեր անկախ և անկողմնակալ փորձաքննություն իրականացնելու գործընթացը:

Միջազգային փորձագետի հետ համագործակցությունը գնահատվել է որպես արդյունավետ բոլոր փորձագետների կողմից:

**Համակարգողի դերը և անհրաժեշտ հմտությունների առկայությունը**
Համակարգողներն իրենց պարտականությունները պատշաճ կերպով են իրականացրել: Վերջիններս արդյունավետ աշխատել են խմբերում՝ դրսևորելով հաղորդակցվելու, կառավարչական, կազմակերպչական և թիմային աշխատանքի հմտություններ, և հանդես եկել համբերատարությամբ:

**Փորձաքննություն, արտաքին գնահատում**
**Փաստաթղթերի նախնական ուսումնասիրություն (նախնական գնահատում)**
Նախնական գնահատման գործընթացը տարբեր փորձագիտական խմբերում արդյունավետ է եղել. ծառայել է իր նպատակին, փորձագետները կարողացել են ՄՈՒՀ-ի վերաբերյալ ընդհանուր պատկերացում կազմել, գնահատել բուհի ուժեղ և թույլ կողմերը: Արդյունավետ կերպով դուրս են բերվել հիմնախնդիրները/հարցերը, որոնք բավարար կերպով ներկայացված չեն եղել, խնդրահարույց են եղել և ենթակա են եղել ուսումնասիրման փորձագիտական այցի ընթացքում: Փորձագետների պնդմամբ վերջինս շատ օգտակար է եղել նաև փորձագիտական այցերն արդյունավետ կազմակերպելու և փորձագիտական զեկույց պատրաստելու տեսանկյունից: Որպես դիտարկում ներկայացրել են, որ նախնական գնահատման գործընթացի արդյունավետությունը մեծապես կախված է նաև ինքնավերլուծության զեկույցի որակից և ամբողջականությունից: Նախնական գնահատման գործընթացն անհրաժեշտ փուլ են համարում, առանց որի հնարավոր չէր լինի փորձագիտական այցի նախապատրաստվելն ու զեկույցի պատրաստումը:

ՈԱԱԿ-ի կողմից տրամադրված փաստաթղթերի փաթեթից (օրենսդրական, նորմատիվ փաստաթղթեր, ուղենիշեր, ձևաչափեր և այլն) փորձագետները ևս բավարարված են, և գտնում են, որ վերջիններս բավարար են արդյունավետ փորձաքննություն իրականացնելու համար:
Ինչ վերաբերում է նախնական գնահատման ձևաչափին, փորձագետները, ընդհանուր առմամբ, բավարված են և գտնում են, որ այն կիրառելի է, թիրախավորված և հարմար ՄՈՒՀ-ի վերաբերյալ պատկերը վերհանելու տեսանկյունից: Հիմնականում փոփոխությունների կամ վերանայման կարիք չեն տեսնում: Այդուհանդերձ, որոշ փորձագետներ կարծում են, որ վերջինս ինչ-որ առումով ծավալուն է և պարզեցման կարիք ունի: Միևնույն ժամանակ առաջարկում են ձևաչափը փոխկապակցել վերջնական փորձագիտական զեկույցի ձևաչափի հետ, մասնավորապես՝ փորձագիտական զեկույցի կազմումն սկսել նախնական գնահատման փուլում, իսկ այցից հետո ճշգրտել: Առաջարկում են նաև նախնական գնահատմանը հատկացված ժամանակն ավելացնել:

Գործընթացի արդյունավետությունից և ձևաչափերի հարմարավետությունից զատ, փորձել ենք պարզել, թե որքան ժամանակ է պահանջվել փորձագետներից նախնական գնահատում իրականացնելու համար: Ինչպես ցույց տվեցին ուսումնասիրության արդյունքները, փորձագետների մեծամասնությունը նախնական գնահատման վրա աշխատել են 60-80 ժամ: Չնայած, որ եղել են փորձագետներ, ովքեր գնահատում իրականացրել են 20-40 ժամվա ընթացքում կամ 80-100 ժամ:

**Փորձագիտական այց ուսումնական հաստատություն**
Փորձագիտական այցերն ուսումնական հաստատություններ, արդյունավետ են եղել բոլոր փորձագետների համար: Ըստ էության ՄՈՒՀ-ի իրական պատկերը կարողացել են վերհանել հենց փորձագիտական այցի ժամանակ: Համակարգողների կարծիքով ևս հանդիպումներն արդյունավետ են եղել ՄՈՒՀ-ում առկա հիմնական խնդիրներն ու կարիքները վերհանելու տեսանկյունից: Ավելին, փորձագետները նշում են, որ հանդիպումների հաջորդականությունը

ճիշտ էր պլանավորված, իսկ հանդիպումներն անցնում էին համակարգված կերպով, ինչն էլ հնարավոր է դարձրել բոլոր հանդիպումների արդյունքում մեծ ծավալի անհրաժեշտ տեղեկատվության դուրս բերել: Կարծիք է հնչել, որ հանդիպումների արդյունավետությունը մեծապես կախված է նաև հանդիպումը վարողից, վերջինիս պատրաստվածությունից և գործընթացը մոդեռացնելու կարողությունից: Փոքր-ինչ վերապահումներով են անդրադարձել բաց հանդիպումներին և փաստաթղթերի ուսումնասիրման գործընթացին: Փորձագետների կարծիքով բաց հանդիպումներն այնքան էլ արդյունավետ չեն, քանի որ կամ ընդհանրապես ոչ ոք բաց հանդիպումների չի գալիս, կամ եթե նույնիսկ ՄՈՒՀ-ի ներկայացուցիչները ներկայանում են հանդպիպմանը, չեն պահպանում արդեն իսկ հաստատված ընթացակարգը կամ խուսափում են խոսել ՄՈՒՀ-ի խնդիրներից:
Ինչ վերաբերում է փաստաթղթերի ուսումնասիրմանը, փորձագետների կարծիքով վերջինիս հատկացված ժամանակահատվածը պետք է ավելացվի, որպեսզի հնարավոր լինի առավել խորքային խնդիրներ վերհանել և ՄՈՒՀ-ի գործունեության մասին ամբողջական պատկերացում կազմել:

Ըստ ՈԱԱԿ-ի հավատարմագրման ձեռնարկի՝ յուրաքանչյուր փորձագիտական այցի շրջանակներում իրականացվել են փակ հանդիպումներ, որոնք նպատակաուղղված էին ամփոփելու հիմնական արդյունքները, յուրաքանչյուր հարցի վերաբերյալ ձեռք բերելու համընդհանուր ընկալում ու համաձայնություն, սկսելու վերջնական հաշվետվության պատրաստման աշխատանքները: Փակ հանդիպումները հարցվողների զգալի մեծամասնության կարծիքով շատ կարևոր են և արդյունավետ, սակայն, որպես կանոն, շատ ժամանակատար են:
Հիմնվելով փորձագիտական այցերի առանձին հանդիպումների արդյունավետության գնահատման տվյալների վրա ևս՝ կարելի է փաստել, որ այցի առանձին հանդիպումները ծառայել են իրենց նպատակին, իսկ փորձագետները կարողացել են վերհանել անհրաժեշտ տեղեկատվությունը օբյեկտիվ գնահատում իրականացնելու համար:

Համակարգողների կարծիքով հանդիպումները մեծամասամբ ընթացել են համագործակցային մթնոլորտում, իսկ փորձագիտական խմբի անդամները կարողացել են արդյունավետորեն կառավարել հանդիպումների ընթացքը:

Ինչ վերաբերում է ՄՈՒՀ-ի վերաբերյալ տվյալներ վերհանելու տեսանկյունից փորձագիտական այցի հանդիպումների հարց ու պատասխան ձևաչափին, այն հիմնականում արդյունավետ, վստահելի և նպատակահարմար է եղել: Ձևաչափի փոփոխության անհրաժեշտության չկա: Այդուհանդերձ, կարևորվում է փորձագետների հարցադրումների ոճը: ՄՈՒՀ-երի ներկայացուցիչները կարծում են, որ հավատարմագրումը գործընկերային գնահատում է և մասնագիտական վստահությունը կարևոր բաղադրիչ է: Այդիսկ պատճառով բարոյահոգեբանական մթնոլորտի ապահովումն այս գործընթացում չափազանց կարևոր է:

Թե ՄՈՒՀ-երը, թե փորձագետները, թե համակարգողները գտնում են, որ ընդհանուր առմամբ փորձագիտական այցի տևողությունը բավարար է եղել ուսումնական հաստատության մասին ամբողջական պատկերացում կազմելու և ՄՈՒՀ-ի ուժեղ և թույլ կողմերը բացահայտելու համար: Այդուհանդերձ ռեսուրսների դիտարկմանը, փաստաթղթերի ուսումնասիրմանն ու փակ քննարկումներին հատկացվող ժամանակահատվածը պետք է ավելացնել: Հետազոտության մասնակիցների մեծամասնության կարծիքով տարբեր թիրախային խմբերի հետ հանդիպումների անցկացման ամենաօպտիմալ ժամանակահատվածը 45-60 րոպեն է՝ կախված հանդիպումների առանձնահատկություններից:

Լրացուցիչ տեղեկատվություն տրամադրելու ՄՈՒՀ-ի պատրաստակամության և վերջինիս կողմից տրամադրվող աշխատանքային պայմանների տրամադրման վերաբերյալ կարծիքները,

հիմնականում, դրական են: Մինչդեռ համակարգողների կարծիքով տեղեկատվության տրամադրման և ստացման գործընթացի վերաբերյալ պատկերն ուսումնական հաստատությունից ուսումնական հաստատություն տարբերվել է. որոշ ՄՈՒՀ-երում անմիջապես տրամադրվել է անհրաժեշտ տեղեկատվությունը, որոշ ՄՈՒՀ-ում կամ տեղեկատվությունը տրամադրվել է ուշացումով, կամ ՄՈՒՀ-ը հրաժարվել է տրամադրել հավելյալ տեղեկատվություն/փաստաթուղթ, որը իր հերթին պատճառ է հանդիսացել ժամանակացույցից շեղումների:

ՄՈՒՀ-երի կողմից տրամադրված ռեսուրսները հիմնականում բավարար են եղել՝ փորձագիտական այցերն արդյունավետ անցկացնելու և անհրաժեշտ տեղեկատվությունը վերհանելու առումով:

Քանի որ երկրում համաճարակային դրությամբ պայմանավորված, 2020թ.-ի որոշ հավատարմագրման գործընթացների փորձագիտական այցեր կազմակերպվել են առցանց տարբերակով, ուստի հետազոտության շրջանակներում չէինք կարող չանդրադառնալ վերջինիս արդյունավետությանը: Նշենք, որ ՄՈՒՀ-երի ներկայացուցիչները համարում են, որ գործընթացն ունի իր դրական և բացասական կողմերը: Այնուամենայնիվ, հնարավոր չէ խուսափել տեխնիկական խնդիրներից, և անհնար է ուսումնական հաստատությունն ամբողջական ներկայացնել: Փորձագետներն իրենց հերթին կարծում են, որ առցանց տարբերակով դժվար է ուսումնական հաստատության մասին ամբողջական պատկեր կազմել: Չնայած ռեսուրսները տեսանկարահանվում և տրամադրվում են, այդուհանդեձ, անհնար է գնահատել, օրինակ՝ լաբորատորիաների նյութերով հագեցվածությունը, կամ սարքավորումների կիրառելիությունը, մաշվածությունը: Կամ լսարանների տեխնիկական հագեցվածության հասանելիությունը:

**Փորձագիտական զեկույցի պատրաստում**

Փորձագետների ճնշող մեծամասնությունը ՈԱԱԿ-ի կողմից կիրառվող փորձագիտական զեկույցի ձևաչափով բավարարված են: Փորձագիտական զեկույցն, ընդհանուր առմամբ, ծառայել է իր նպատակին. մանավորապես զեկույցը կարող է ազդեցություն ունենալ ՄՈՒՀ-ի նոր ռազմավարության ընտրության վրա և բուհի ընդհանուր վարչարարության և կառավարման վրա, ինչպես նաև նոր վերլուծական հնարավորություններ կարող է ընձեռել: Այնուամենայնիվ, զեկույցի լեզուն այնքան էլ մատչելի չի եղել, փորձագիտական եզրակացություններում դեռևս ձևակերպումների տարընթերցումների խնդիր կա: Միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների մասնակիցների կածիքով ոչ միշտ են զեկույցներն արտացոլում ուսումնական հաստատության իրական վիճակը, ՄՈՒՀ-ի գործունեության ողջ շրջանակը:

Ինչպես հարցումների, այնպես էլ ֆոկուս խմբային քննարկումների ժամանակ հետազոտության մասնակիցները նշել են, որ զեկույցում նշված թերությունները հիմք են հանդիսացել հետագա գործունեության պլանավորման համար և կարող են ՄՈՒՀ-ի համար արդյունավետ ուղենիշ դառնալ երկարաժամկետ զարգացման հեռանկարների հստակեցման տեսանկյունից: Խորհրդատվությունները ևս հասկանալի և շատ օգտակար են եղել ՄՈՒՀ-ի հետագա զարգացման և ապագայում ճիշտ կողմնորոշվելու տեսանկյունից: Իսկ զեկույցներում նշված դիտարկումները հետագայում դարձել են ՄՈՒՀ-ի բարելավման պլանի առանցքային կետեր: Միևնույն ժամանակ նշվում է, որ խորհրատվությունները հաճախ շատ լայն են և դժվար է հասկանալ՝ ինչ պետք է անել:

Փորձագետների մեծ մասը զեկույցի վրա միջինում աշխատել է 60-80 ժամ, 14%-ի դեպքում 100-ից ավել ժամ է ծախսվել և միայն 12%-ն է կարողացել 20-40 ժամում զեկույցը վերջացնել:

Ինչ վերաբերում է զեկույցի նախնական տարբերակի վերաբերյալ ՄՈՒՀ-ի դիտողություններին և առաջարկություններին, ՄՈՒՀ-երի կարծիքները հավասարապես բաշխվել են. միմասը նշում է,

որ առարկությունները հիմնականում հաշվի են առնվել փորձագիտական զեկույցի վերջնական տարբերակը պատրաստելիս, մի մասը՝ ոչ: Սակայն նշում են, եթե նույնիսկ հաշվի չեն առնվել, բավարարված են փորձագիտական խմբի հիմնավորումներով:

Փորձագիտական զեկույցում նշված թերությունների վերացման բուհի ծրագրի ներկայացման ձևաչափի վերաբերյալ ՄՈՒՀ-երը գտնում են, որ վերանայման անհրաժեշտություն չկա, արդուհանդերձ ֆոկուս խմբային քննարկման ժամանակ նշվեց, որ նախորդ ձևաչափն ավելի պարզ էր և մատչելի:

**Հավատարմագրման յուրաքանչյուր գործընթացին հատկացված ժամկետների իրատեսականություն**

Հավատարմագրման ժամանակացույցի հատկացված ժամկետներն, ընդհանուր առմամբ, բավարար են եղել գործընթացն արդյունավետ կազմակերպելու համար, իսկ մասնակիցները, հիմնականում, փոփոխության անհրաժեշտություն չեն տեսնում: Միայն վերապահումներ են ներկայացվել ինքնավերլուծության զեկույցի և փորձագիտական զեկույցի պատրաստմանը հատկացված ժամանակահատվածների վերաբերյալ: Բուհերը կարծում են, որ ինքնավերլուծության զեկույցի պատրաստմանը հատկացված ժամանակը միանգամայն բավարար էր և օպտիմալ, մինչդեռ միջին մասնագիտական ուսումնական հաստատություններն առաջարկել են առաջին անգամ գործընթաց անցնող ուսումնական հաստատությունների համար փոքր-ինչ երկարաձգել հատկացվող ժամանակահատվածը: Թե փորձագետների, թե համակարգողների պնդմամբ փորձագիտական զեկույցի պատրաստմանը հատկացված ժամանակահատվածը, ինչ-որ առումով, բավարար չի եղել: Ուստի առաջարկում են զեկույցների պատրաստման ժամանակահատվածը երկարաձգել նվազագույնը 2 շաբաթով:

Քանի որ որոշ ուսումնական հաստատություններ անցնում էին վերահավատարմագրման գործընթացներ, խնդրել ենք նշել՝ ինչպիսի մարտահրավերների են հանդիպել երկրորդ շրջափուլի ժամանակ: Հարցվածների մի մասը նշել է, որ մարտահրավերների չի հանդիպել, մյուս մասը նշել է ֆորս-մաժորային իրավիճակները՝ պայմանավորված քովիդ-19-ով և պատերազմական դրությամբ:

Որպես ընդհանուր նկատառումներ և բարելավման առաջարկներ ներկայացվել են՝

| Նկատառումներ |
| --- |
| Շնորհակություն ՈԱԱԿ-ի անձնակազմին պրոֆեսիոնալիզմի և համակարգված ու արդյունավետ գործընթացը կազմակերպելու համար. |
| Պատիվ է նորից համագործակցել ՈԱԱԿ-ի հետ և ներգրավվել հավատարմագրման գործընթացներում |
| ՈԱԱԿ-ը կրթության կառավարման օրինակելի մշակույթի կրող և ներդրող է |
| Խմբի համակարգողի և ղեկավարի աջակցությունը մեծ էր և մոտիվացնող |
| Հավատարմագրման գործընթացը որակի մշակույթի տարածման լավագույն միջոցն է. ՄՈՒՀ-երի ներկայացուցիչները, փորձագետները, ուսանողներն անցնելով գործընթացը ձեռքբերած փորձը տանում են իրենց ուսումնական հաստատություններ |
| Հավատարմագրման գործընթացին մասնակցելով՝ ավելի լավ պատկերացում կազմեցի կրթական համակարգի խնդիրների մասին, ծանոթացա միջազգային փորձին |
| ՄՈՒՀ-երում հաճախ ներքին շահակիցները հավատարմագրումը դիտարկում են որպես ստուգման գործիք, ոչ թե բարելավման |
| Առաջարկություններ |

| |
|---|
| Միջազգային փորձագետներին գործընթացում ներգրավվելու մասին տեղեկացնել ամենաքիչը 6 ամիս առաջ |
| Գործընթացն ավելի արագ կազմակերպելու համար փորձագիտական զեկույցը կարող է գրել համակարգողը՝ նախօրոք փորձագետներից հավաքելով վերջիններիս դիտարկումները |
| ՄՈՒՀ-ի ՈԱ պատասխանատուների համար պարբերաբար իրականացնել վերապատրաստումներ |
| Մշակել փորձագետների գրագողության դեպքերը բացահայտող և կանխարգելող մեխանիզմներ |
| Փորձագիտական խմբերը ձևավորելիս հաշվի առնել ոչ միայն մասնագիտական որակները, այլև հոգեբանական գործոնները |
| Բուհական համակարգի հավատարմագրման գործընթացի փորձագետների պարտադիր պահանջներից հանել գիտական աստիճան ունենալը |
| Հավատարմագրման գործընթացի ֆինանսական պարտավորությունների և/կամ դրա չափի վերանայում |
| Փորձագիտական զեկույցում նշված խորհրդատվությունները դարձնել առավել ուղղորդված և մասնավորեցված. շատ ընդհանրական են |
| Վերանայել ինքնավերլուծության ձևաչափը՝ հաշվի առնելով ուսումնական հատատությունների կազմակերպահիրավական ձևը և մասնագիտական ուղղվածությունից բխող առանձնահատկությունները |
| Պարզեցնել փորձագիտական զեկույցի ձևաչափը |
| Փորձագիտական այցի ժամանակ հարցեր ձևակերպել ավելի հստակ և մատչելի |
| Հավատարմագրման հանձնաժողովի գնահատման չափանիշները դարձնել չափելի և հասանելի, որպեսզի գնահատման գործընթացը լինի թափանցիկ |
| Ներդնել չափանիշների բողոքարկման մեխանիզմներ |
| **Ընդամենը** |

Հաշվի առնելով հավատարմագրման տարբեր փուլերի վերաբերյալ հետազոտության մասնակիցների արձագանքը՝ կարելի է պնդել, որ գործընթացն առհասարակ արդյունավետ է. իրականացվում է համակարգված, փորձագիտական խմբերը ձևավորվում են փորձառու մասնագետներից, գործընթացներն իրականացվում են թափանցիկ (առաջնորդվելով հիմնավորվածության, անկախության ու անկողմնակալության սկզբունքներով), իսկ գնահատման արդյունքները հուսալի են, հիմնավորված, ընդունելի ՄՈՒՀ-երի կողմից: Գնահատման արդյունքները հիմք են ծառայել ՄՈՒՀ-երի հետագա բարելավման և պլանավորման համար: Առաջարկվում է հետագայում պահպանել հավասարության, արդարության առաջնայնության և որակի գերակայության սկզբունքները:

Հավատարմագրման հանձնաժողովի պնդմամբ փորձագիտական գնահատումներն իրականացվել են ՈԱԱԿ-ի մեթոդաբանության, հասատված ժամանակացույցերի և հավատարմագրման ձեռնարկի համաձայն: Փորձագիտական զեկույցների բոլոր մասերը տրամադրում են բավարար, պարզ և հավաստի տեղեկատվություն: Որևէ անհամապատասխանություն չկա հանձնաժողովի եզրակացության և զեկույցում բերված ապացույցների միջև: Շահակիցները հիմնականում բավարարված են աշխատանքային ծանրաբեռնվածությունից և ՈԱԱԿ ձևաչափերից:

## ՀԱՎԵԼՎԱԾ 1

Հետազոտությանը մասնակցած ՈԱԱԿ փորձագետների ընտրանքը


Դերը փորձագիտական խմբում
17
13
8
48
Համակարգող
Միջազգային փորձագետ
Փորձագիտական խմբի ղեկավար
Փորձագետ


Դերը փորձագիտական խմբում
9%
6%
9%
52%
24%
ՊԴ կազմի ներկայացուցիչ
Կրթության կառավարման ոլորտի ներկայացուցիչ
Մասնագիտ. կամ տնտեսության ոլորտի ներկայացուցիչ
Ուսանող
Գործատու


Քանի՞ անգամ եք եղել փորձագետ
11%
32%
57%
1
2
3 և ավելի


ՄՈՒՀ-երի ներկայացուցիչներ
9
17
ԲՈՒՀ-երի ներկայացուցիչներ
Միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների ներկայացուցիչներ